Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 6 (527) ապրիլ 1-17, 2023թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Ամուր կամքը պարտավորեցնող է

Արցախը՝ արդեն չորս ամիս է, որ դիմադրում է: Բաքվի իշխանությունների կողմից կեղծ բնապահպանների պատրվակով Արցախը մայր Հայաստանին կապող ճանապարհը փակ է: Արդեն իսկ մաշել է բնապահպանական պատրվակը, այժմ զենքի-զինամթերքի ապօրինի Արցախ տեղափոխման պատրվակն է օրակարգում:

Միջազգային բեմահարթակում թեեւ արդեն բոլոր կողմերն անդրադարձել են Բաքվի անմարդկային եւ նենգ միտումներին, սակայն միայն հնչում են մտահոգության արտահայտություններ եւ կոչեր, գործնականում՝ զրո արդյունքով:

ՀՀ իշխանությունները եւս, իրենց պատկերացմամբ, կարծես այլեւս անելիք չունեն. հարցն արծարծել են միջազգային ատյաններում, ինչ-որ տեղ հայանպաստ վճիռ վաստակել, եւ մնում է նստել-սպասել, թե երբ կբարեհաճի՝ Փաշինյանի բնութագրմամբ «բարեկիրթ» Ալիեւը ապաշրջափակի Արցախը:

Մյուս կողմից, ակնհայտորեն ՀՀ իշխանությունը փորձում է իր ուսերից թոթափել հայ ժողովրդի շահերը ներկայացնելու եւ Արցախյան հարցի շուրջ բանակցություններում որպես կողմ հանդես գալու որեւէ առիթ՝ դա թողնելով Ստեփանակերտ-Բաքու ուղիղ բանակցությունների ձեւաչափին՝ «Արցախի հարցը պետք է լուծեն Արցախցիները» պառակտիչ գաղափարը սերմանելով:

Այս բոլոր իրողությունների համայնապատկերում Արցախում շարունակվում է դիմադրությունը: Դիմադրություն, որն արտացոլում է պայքարելու վճռականություն: Օրեցօր խորացող կենցաղային պայմանների սղության եւ սահմանափակումների մթնոլորտում, այնուամենայնիվ, գտնվում են ելքեր, հնարավորություններ, որոնվում ճնշումը նվազեցնելու եւ տանելի պայմաններ ապահովելու միջոցներ: Անժխտելի է, որ այս պայմաններում բազմապատիկ դժվարանում է կառավարումն ու վերահսկողությունը, եւ նման դեպքերում կառավարման համակարգի կարգապահությունն ու կոշտ միջամտություններն այն լծակներն են, որոնք հանրության մոտ պետք է ձեւավորեն համերաշխության մթնոլորտ, որն անհրաժեշտ պայման է համընդհանուր միասնական մթնոլորտ ապահովելու համար:

Ներքին դիմակայությանը զուգահեռ՝ պայքարը արտաքին եւ համահայկական մակարդակում եւս հարկավոր է շարունակել: Արցախը սահմանափակ ռեսուրսներ ունի արտաքին աշխարհի հետ հարաբերվելու հարցում: Մինչ այժմ այդ կարեւոր ճակատը ինչ որ ձեւով ստանձնել էին ՀՀ դիվանագիտական համակարգը եւ, ոչ պաշտոնական մակարդակով, ՀՅԴ Հայ դատի գրասենյակները: Այժմ առաջին լծակը անգործունյա է, իսկ ՀՅԴ-ն, որպես ոչ պետական մարմին, ունի սահմանափակումներ: Մյուս կողմից, համահայկական համախմբումը օր օրի խաթարվում է, ՀՀ իշխանությունների ապազգային քաղաքականությունը կործանում է այն առանցքները, որոնք մինչ այժմ հաղթանակի երաշխիքներ են եղել:

Այս բոլորին ավելանում են նաեւ միջազգային անկայուն, հեղհեղուկ կացությունը, նոր ուժային կենտրոնների նկրտումներն ու հների սլաքների տատանումները:

Համընդհանուր այս տեսադաշտում լուսավոր կետը մնում է միայն պայքարի համար Արցախում առկա տրամադրություններն ու վճռակամությունը: Մնում է, որ Արցախի իշխանությունները եւս ըմբռնեն այս կարեւոր փրկօղակի գինը եւ հարգեն հանրային՝ առայժմ լուռ, բայց պարտավորեցնող պահանջը:

Միասնական զորակցական հավաք՝ հանուն Արցախի

Ապրիլի 16-ին Հալեպի Ազգային Քարեն Եփփե ճեմարանում հազարավոր հալեպահայերի մասնակցությամբ տեղի ունեցավ զորակցական հավաք՝ ի աջակցություն ավելի քան 125 օր շրջափակված Արցախի ու արցախցիների:

Հավաքին ներկա էր Բերիո Հայոց Թեմի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Աշգարյանը, ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանը, ՀՅԴ Բյուրոյի անդամ, ՀՅԴ Հայ դատի եւ քաղաքական հարցերի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը, Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Իշխանյանը, ՀՅԴ Հայաստանի, Իրանի եւ Միջին Արեւելքի մարմինների եւ Հայ դատի հանձնախմբերի ներկայացուցիչներ, ՀՀ Հալեպի գլխավոր հյուպատոսության խորհրդական Դավիթ Թադեւոսյանը, ՀՀ մարդասիրական խմբի հյուպատոսության ներկայացուցիչ, գնդապետ Արկադի Տոնոյանը, հալեպահայ երեք կազմակերպությունների, հայ կաթողիկե եւ ավետարանական համայնքների ներկայացուցիչներ, Լիբանանի խորհրդարանի հայկական խորհրդարանական բլոկի նախագահ Հակոբ Բագրատունին, Սիրիայի խորհրդարանի պատգամավորներ Ժիրայր Ռեհյանը եւ դոկտ. Լյուսի Իսկենյանը, հալեպահայ բարեսիրական, մարզական եւ մշակութային միությունների ներկայացուցիչներ ու հալեպահայերի հոծ բազմություն:

Հանդիսությունը բացվեց Սիրիայի, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների օրհներգերով՝ Սիրիայի պատանեկան եւ երիտասարդական միությունների երիտասարդների կատարմամբ:

Հայերեն բացման խոսքում Ներսես Պարսումյանը հայտնեց, որ «Արցախը մեր ինքնության, ինքնիշխանության եւ գոյատեւման դարպասն է: Արցախով է սկսվում ու վերջանում Հայաստանի սահմանը: Արցախը նորանկախ Հայաստանին տվեց ինքնավստահություն, ուժականություն եւ հպարտություն»:

Արաբերեն խոսքում Կարո Եղիայանն ասաց. «Մեր ձայնն ենք բարձրացնում՝ ի աջակցություն բոլոր այն ազգերի, որոնք ապրում են բռնաճնշումների տակ»:

Հանդիսությունը շարունակվեց պատանիներից եւ երիտասարդներից կազմված երգչախմբի ազգային, հայրենասիրական երգերով, ասմունքներով, դուդուկի նվագով:

Օրվա բանախոսն էր Արցախի Ազգային ժողովի պատգամավոր Դավիթ Իշխանյանը:

Նա Արցախի պայքարող հայրենակիցների ջերմ ողջույնները փոխանցեց սիրիահայությանն այս դժվար օրերին եւ ցավակցություն հայտնեց Սիրիան ցնցած երկրաշարժի զոհերի հարազատներին՝ ուժ ու կորով մաղթելով Սիրիայի պայքարող ժողովրդին, շեշտելով, որ Արցախը եւս իր օժանդակությունը բերեց սիրիահայությանն այնպես, ինչպես սիրիահայությունը զորավիգ կանգնեց Արցախի ժողովրդին. «Փետրվարին, երբ տեղի ունեցավ աղետալի երկրաշարժը Սիրիայում ու Թուրքիայում, ՀՕՄ-ի Արցախի միավորի նախաձեռնությամբ եւ Արցախի Հանրապետության իշխանությունների աջակցությամբ դրամահավաք սկսվեց՝ ի զորակցություն Սիրիահայության: Այսօր լիազորված եմ ԱՀ իշխանությունների եւ ՀՕՄ-ի Արցախի միավորի անունից հայտարարելու, որ համատեղ իրականացված այդ նախաձեռնությունը բավականին հաջող էր ու արդյունավետ: Ժողովուրդը սիրով ու նվիրումով է մասնակցել դրամահավաքին»:

Իր խոսքում Դավիթ Իշխանյանն ասաց, որ այսօր խաթարվել է հաղթանակների ու հաջողությունների գրավական Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնությունը: Հայ ժողովուրդը բաժանվել է հատվածների, հների ու նորերի, սպիտակների եւ սեւերի. «Միասնականությամբ, պայքարի ոգով տոգորված, հաղթանակած ժողովրդից կարծես այլեւս հետք չի մնացել:

Արտաքին ու ներքին ուժերի «հակահայ ջանքերը» իզուր չեն անցել: Այդ ուժերի նենգամիտ ձգտումները չեն կարող իրականություն դառնալ, քանի դեռ կանք մենք՝ հայ ժողովրդի այն տեսակը, որ խորությամբ գիտակցում է իր առաքելությունը եւ պատրաստ է իր ջանքերն ուղղորդելու եւ չեզոքացնելու նրանց բոլոր ծրագրերը: Գիտենք՝ այսօր խոսելու ժամանակները չեն:

→ 2

Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը հայտնվել է ալիեւյան քարոզչամեքենայի թիրախակետում

Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը եւ աշխարհում բոլոր ՀՅԴ Հայ դատի գրասենյակներն ու հանձնախմբերն իրականացնում են հայկական շահերի պաշտպանությունը: Ալիեւը գիտի, որ հայանպաստ բանաձեւերի ընդունման պատճառով խիստ վարկաբեկվում է, եւ որ եվրոպական կառույցների հետ բանակցելիս դրանք կիրառվում են որպես խաղաքարտեր Ադրբեջանի դեմ:

Եվրոպայի Հայ Յեղափոխական Դաշնակցության Հայ դատի՝ EAFJD գրասենյակը աշխարհում գործող ՀՅԴ Հայ դատի գրասենյակներից է եւ գործում է՝ մասնավորապես Հայ դատի, Արցախի բնիկ հայ ժողովրդի ինքնորոշման իրավունքի, Հայոց ցեղասպանության ճանաչման եւ հատուցման, Հայաստանի եւ Արցախի հանրապետությունների եւ Եվրոմիություն միջեւ կապերի ամրապնդման համար եւ պաշտոնապես գրանցված է Եվրոխորհրդարանում: Իր դերակատարությունը, այդպիսով, եվրոպական գործադիր եւ օրենսդիր մարմիններում կայացող պաշտոնյաների կամ պատգամավորների որոշումների վրա հայանպաստ ազդեցություն գործելն է: Այն գտնվում է Բելգիայի մայրաքաղաք Բրյուսելում: Սրանից չորս ամիս առաջ գրասենյակը նշեց իր գործունեության 20-ամյակը: ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի հանձնախմբի նախագահը Գասպար Կարապետյանն է, իսկ ՀՅԴ Եվրոպայի Հայ դատի գրասենյակի գործադիր տնօրենը՝ Հեղինե Էվինյանը:

Գրասենյակի հանդեպ ադրբեջանական հալածանքներն օրեցօր ավելի ուժգին են դառնում, եւ ավելին՝ դրանց կիզակետում հայտնվել է գրասենյակի նախագահ Գասպար Կարապետյանը: Ալիեւի պահանջով, 2018-ին ո՛չ միայն վերջինս գտնվել էր Ինտերպոլի ադրբեջանական ցուցակում, այլ նաեւ հասել է եվրոպական մեդիադաշտ՝ սկանդալային թյուր տպավորություններ առաջացնելու նպատակ հետապնդող կասկածելի հոդվածագիրների գրչին, որոնց «գրեթե հավաստի» աղբյուրները «զարմանալիորեն» ադրբեջանական մամուլն են: Գործը հասել է բելգիական պատկառելի «Լը Վիֆ» (Le Vif) պարբերականին, որի սյունակներում ոմն Սեբաստիան Բուսուան այս տարվա մարտի 1-ին հրապարակել է «Արմենիեն Գեյթը տեսանելի՞ է, Եվրոպան պե՞տք է մաքրի իր բարեկամական խմբերը» ֆրանսերեն շարադրված անհիմն հոդվածը: Հեղինակն ընդգծում է, որ Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը Եվրոպայի ամենամեծ հայամետ կազմակերպությունն է, այս տեղեկությունը շաղախելով կեղծ տվյալներով՝ հավաստիացնելով, թե այն ֆինանսավորվում է «միլիոնատեր Կասպար Կարապետյանի կողմից»: Ֆրանսիայի կողմից Եվրոպական ժողովրդական խմբի՝ եվրոպատգամավոր Ֆրանսուա-Քսավյե Բելամիին անվանելով Հայաստանի եռանդուն պաշտպան, ինչը որ անհերքելի է, Բուսուան հայտնում է, որ գրասենյակի ազդեցությամբ 22թ. նոյեմբերի 19-ին մի խումբ խորհրդարանականներ ստորագրել են հայտարարություն, որում մեղադրում են Ադրբեջանին «Հայաստանի դեմ ագրեսիա» իրականացնելու եւ «երկրի տարածքային ամբողջականությունը խախտելուե մեջ՝ մոլորեցնելով ընթերցողին, կարծես թե հայտարարության բովանդակությունը չի համապատասխանում իրականությանը: ««Կատար Գեյթից» հետո Եվրոպան կիանդիպի՞ «Արմենիեն Գեյթի»,- գրում է Բուսուան՝ կասկածի տակ առնելով Հայաստանի հետ կապված բարեկամական խմբերի գործունեությունը հատկապես:



Մարտի 3-ին՝ «Լը Վիֆ»-ի (ամբաստանիչ) հրապարակման հայտնվելուց ընդամենը երկու օր անց ադրբեջանական թերթերից մեկը վերնագրել է մի հոդված՝ «Եվրոպայում նոր՝ «Արմենիեն Գեյթ», կաշառակերային սկանդալ է բռնկվել» վերնագրով, «բացահայտում», որը նա վերագրել է «Լը Վիֆ»-ին: Այսպիսով, լրատվամիջոցները, միմյանց մեջբերելով, կարող են հանգեցնել զուգահեռ իրականության: Սակայն այդ քարոզարշավները հաճախ ինքնաբուխ չեն. դրանք կազմակերպվում են միջազգային խորհրդատվական ընկերությունների կողմից:

→ 3

Միասնական զորակցական հավաք՝ հանուն Արցախի

1 ← Երբեմն լուռ գործելն ավելի արդյունավետ է, քան հրապարակային ճառեր հնչեցնելը: Մեր կացությունն այնպիսին է, որ պարտավորված ենք խաղի այս կանոններով առաջնորդվել»:

Անդրադառնալով Արցախում տիրող իրավիճակին, առկա մարտահրավերներին, Դ. Իշխանյանը նշեց, որ անցած 2,5 տարիներին Ադրբեջանի ագրեսիվ քաղաքականությունը Արցախի նկատմամբ էթնիկ զտումներին միտված քայլեր են, որոնք թելադրում են՝ նախ ամրապնդել եւ ուժեղացնել Արցախի Պաշտպանության բանակը, այնուհետեւ ստեղծել անվտանգային հավելյալ գործոններ:

«Հետպատերազմյան Արցախը ստիպված էր եւ է դիմակայել տնտեսական ու սոցիալական այն մարտահրավերներին, որոնց դեմ առ դեմ էր կանգնած: Տարածքների կորուստ, քայքայված գյուղատնտեսություն, պարենային անվտանգության նոր մարտահրավերներ: Անհրաժեշտ էր արագ վերակազմակերպում եւ նոր ոլորտների զարգացում: Այդ մտայնությամբ զարկ տրվեց ջերմոցային տնտեսությանը, այգեգործությանը եւ հացահատիկային նոր մշակաբույսերի զարգացմանը»,- իր խոսքում ասաց Դավիթ Իշխանյանը՝ ավելացնելով, որ Արցախի տնտեսության ողնաշար համարվող հանքարդյունաբերությունն ու էներգետիկ համակարգը լուրջ հարվածներ ստացան. հանքարդյունաբերության որոշ տարածքներ հայտնվեցին Ադրբեջանի օկուպացիայի տակ, իսկ մինչեւ վերջերս գործող Կաշենի հանքավայրի շահագործումը ԱՀ կառավարության որոշումով ժամանակավորապես դադարեցվեց այսպես կոչված «բնապահպանների» կեղծ օրակարգի արդյունքում:

Նրա խոսքով, Ադրբեջանը հատուկ հաշվարկներ ունի. շրջափակման միջոցով Արցախին պարտադրել հրաժարվել իր քաղաքական պահանջներից, ինչպես նաեւ հայաթափել Արցախը: Այս ամենին պետք է ավելացնել ՀՀ իշխանությունների կողմից վարվող ապազգային քաղաքականությունը, որը լուրջ հարված է հասցնում ոչ միայն Արցախի հիմնահարցի հայանպաստ ու վերջնական հանգուցալուծմանը, այլեւ համազգային մեր մյուս խնդիրներին:

ՀՅԴ Բյուրոյի անդամը վստահեցրեց, որ պայքարելու համոզումն է առաջնորդում արցախցուն, եւ ոչ մի ճնշում, ոչ մի սպառնալիք, լինի դա շրջափակման տեսքով կամ այլ, չի կարող լինել պարտադրանք որոշումներ կայացնելու համար:

«Դրա վառ վկայությունն են 2022թ. հոկտեմբերի 30-ի եւ դեկտեմբերի 25-ի բազմահազարանոց երկու հանրահավաքները մայրաքաղաք Ստեփանակերտի Վերածննդի հրապարակում: Ընդ որում, երկրորդ հանրահավաքը տեղի է ունեցել շրջափակման պայմաններում, որը եւս մեկ անգամ հաստատում է մեր պայքարի վճռականությունը: Մենք Արցախում շատ լավ ենք հասկանում, թե համահայկական ինչպիսի քաղաքական, կազմակերպական ու բարոյահոգեբանական նոր մակարդակ է անհրաժեշտ ապահովել: Համոզված եղեք, որ դրա պարարտ հողը կա: Պետք է հավատալ, վստահել ու գործել»,- նշեց Դ. Իշխանյանը:

ՀՅԴ Բյուրոյի ներկայացուցիչ Հակոբ Տեր-Խաչատուրյանն իր խոսքում նշեց. «Վստահաբար գիտեք, թե որքա՞ն հարազատ եմ զգում Սիրիայի հայության հայատրոփ կենտրոն Հալեպում: Պաշտոնական հանգամանքներից բացի, ինձ համար տունդարձի համազոր է այսպիսի ամեն այց:

Եվ որքան հատկանշական է, որ երկրաշարժի ցնցումներով անցած սիրիահայությունը Արցախի զորակցական ձեռնարկ է կազմակերպում այսօր, իսկ տագնապահար ու շրջափակված Արցախը դրամահավաք էր կազմակերպել ու պատկառելի գումար է հատկացրել սիրիահայությանը: Սա մեր ժողովրդի միասնականության լավագույն ապացույցներից է:

Այսօր ձեզ բերել եմ ՀՅԴ հայրենի եւ աշխարհատարած ընտանիքի ողջույններն ու սատար հանդիսանալու պատրաստակամությունը: Ահավասիկ, դարձյալ Սիրիայում ենք՝ ամուր կանգնելու ձեր կողքին: Այստեղ են ՀՅԴ Բյուրոյի ընկերները, Հայաստանի եւ Արցախի մեր ներկայացուցիչները, Միջին Արեւելքի (Իրանի եւ Արաբական Աշխարհի) մեր մարմինների եւ Հայ դատի գրասենյակի ու հանձնախմբի ընկերները՝ ոչ միայն մասնակցելու Հալեպում գումարվող մեր շրջանային խորհրդաժողովներին, այլեւ ձեր կողքին լինելով ձեզ փոխանցելու բոլորիս անհուն սերը, խոր հարգանքը եւ աներեր զորակցությունը»:

Օրվա եզրափակիչ խոսքն ուղղեց Բերիոյ Հայոց Թեմի Առաջնորդ Գերշ. Տեր Մակար Սրբ. Եպս. Աշգարյանը:

Անդրադառնալով Արցախի շրջափակման եւ մեր ժողովրդի դիմադրողական ոգուն, սրբազան հայրը հայտնեց. «Արցախի մեր ազգակից եղբայրներին եւ քույրերին զորակցական այս հավաքը գալիս է մեծագույն եւ կենդանի վկայությունը հանդիսանալու մեր հայկական պինդ հոգուն, աննկուն կամքին եւ անհաղթահարելի ոգուն:

«Պարտվում եւ կորցնում ենք, երբ մեր հավատքը տկարանում է, երբ մեր սերը նվազում է, երբ մեր հույսը չքանում է: Մինչ այն ժամանակ, որ մեր սրտում սերը կբաբախի, որ մեր էության մեջ հավատքը զորեղ կմնա եւ հավիտենականության հանդեպ հույսը վառ՝ որեւէ ուժ աշխարհի վրա չի կարող ընկճել մեզ այնպես, ինչպես չեն կարողացել ընկճել եւ չպիտի կարողանան ընկճել մեր միասնական ոգին: Այսօր մենք որպէս ժողովուրդ չենք կարող անտարբեր գտնվել: Մանավանդ հարության տոնական այս ժամանակաշրջանում բոլորս զորակոչի ենք հրավիրվել ու մեր զորակցությունն ենք հայտնում Արցախի մեր քույր-եղբայրներին: Մենք ձեզ հետ ենք այնպես, ինչպես դուք մեզ հետ եղաք: Մենք ձեզ հետ պիտի լինենք եւ պիտի շարունակենք ձեզ հետ տագնապել, պայքարել, մինչեւ որ արդարության եւ հաղթանակի դրոշը ծածանվի Հայաստանի եւ Արցախի երկնակամարի վրա»:

Տ. ԱՂԱՋԱՆՅԱՆ

Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը հայտնվել է ալիեւյան քարոզչամեքենայի թիրախակետում

2← Ապատեղեկատվական արշավները Եվրոպայում ադրբեջանական ազդեցության ռազմավարության միայն մեկ տարրն են, եւ հիշեցնում է, որ մասնագիտացված ՀԿ-ները, ի թիվս այլոց, բացահայտել էին «խավիարային դիվանագիտությունը», ապա եւ «ադրբեջանական լվացքատուն» կոռումպացված համակարգը:

Այնուամենայնիվ, ինչպե՞ս է հաջողվում հասնել Եվրոպական կառույցներում հայանպաստ բանաձեւերի ընդունմանը

«Մենք՝ Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը եւ աշխարհում բոլոր ՀՅԴ Հայ դատի գրասենյակներն ու հանձնախմբերը իրականացնում ենք Հայաստանի քարոզչությունը»,- պարզաբանում է Գասպար Կարապետյանը: «Եվրոխորհրդարանի հետ մեր հիմնական աշխատանքի կենտրոնում է Եվրոհանձնաժողովի նախագահ Ուրսուլա ֆոն դեր Լայենի, արտգործհանձնաժողովի եւ ԵՄ արտաքին գործերի եւ անվտանգության քաղաքականության ներկայացուցիչ Ժոզեպ Բորելի հետ համագործակցությունը: Դրանից բացի, համագործակցում ենք տարբեր հասարակական կազմակերպությունների հետ՝ համատեղ կազմակերպում ենք հանդիպումներ եւ այլն: Եվրոխորհրդարանում մեր ջանքերով կազմել ենք բարեկամության երկու տարբեր խմբեր. մեկը Արցախի հետ, մյուսը՝ Հայաստանի, եւ դրանք մեծ թվով անդամներ ունեն: Դրանից բացի, Բելգիացի լրագրողներ մեր միջնորդությամբ Հայաստան մեկնեցին նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին, եւ հիմա՝ հինգ շաբաթ առաջ՝ նույնպես: Պատերազմի՝ Ստեփանակերտի ռմբակոծման ընթացքում անգամ մեկ պատգամավոր եւ երկու լրագրող Ստեփանակերտ ուղեկցեցինք, եւ իրենք մեծ թվով հոդվածներ հրապարակեցին»,- նկարագրում է Գասպար Կարապետյանը: «Զուգահեռաբար, Հեղինե Էվինյանը եւ ես շարունակ գտնվում ենք հայկական եւ օտար մամուլի հետ կապի մեջ, ամեն տեղ հարցազրույցներ տալիս, Եվրոխորհրդարանի պատգամավորների հետ պարբերաբար հանդիպումներ ենք ունենում: Ընդհանուր առմամբ, մեր աշխատանքն այս է: Բարեբախտաբար, շատ լավ գործակցություն ունենք Հայաստանի դեսպանության հետ»:

Եվրոխորհրդարանը ճանաչել է Արցախի ինքնորոշման իրավունքը

Գրասենյակի գործունեության ակներեւ հաջողություններից է մարտի 22-ին Փարիզում տեղի ունեցած Եվրոպայի խորհրդի Իրավական հարցերի եւ մարդու իրավունքների կոմիտի լիագումար նիստում հայտնած՝ Լաչինի միջանցքի մշտական խոչընդոտման պատճառով ծավալված հումանիտար ճգնաժամի կապակցությամբ խոր մտահոգությունը: Դրանից առաջ, մարտի 15-ին կայացած Եվրոխորհրդարանի լիագումար նիստում հաստատվել էին փետրվարի 20-ին ներկայացված Միջազգային հարցերի հանձնաժողովի երկու՝ ԵՄ-Հայաստան եւ ԵՄ-Ադրբեջան հարաբերությունների բանաձեւերը հօգուտ հայկական կողմի՝ որոշ լրացումներով: **Եվրոխորհրդարանը կոչ է արել Եվրոխորհրդին՝ նպատակաուղղված պատժամիջոցներ կիրառել Ադրբեջանի կառավարության պաշտոնյաների դեմ,** եթե վերջինս անհապաղ չկատարի 2023 թվականի փետրվարի 22-ի Արդարադատության միջազգային դատարանի վճիռը, եւ որ ավելի կարեւոր է՝ **Եվրոխորհրդարանը ճանաչել է Արցախի ինքնորոշման իրավունքը:**

Այսպիսով, Եվրոխորհրդարանն ընդգծում է, որ Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը պահանջում է համապարփակ քաղաքական կարգավորում՝ միջազգային իրավունքին համապատասխան, ներառյալ՝ ՄԱԿ-ի կանոնադրության, ԵԱՀԿ 1975-ի Հելսինկյան եզրափակիչ ակտի շրջանակներում, որոնցից մասնավորապես բխում են Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման հիմնարար երեք՝ ուժի չկիրառման, տարածքային ամբողջականության եւ ազգերի ինքնորոշման իրավունքի սկզբունքները, որոնց ավելացվել են նաեւ ԵԱՀԿ Մինսկի խմբի 2009 թվականի հիմնական սկզբունքները: Այդ մասին հայտնել էր Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակը իր հաղորդագրության մեջ:

67 կետերից բաղկացած ԵՄ-Ադրբեջան հարաբերություններ զեկույցի 3-րդ կետն այն փոփոխություններից է, որ հնարավոր եղավ ավելացնել թե՛ գրասենյակի, թե՛ ՀՀ դեսպանության եւ թե՛ եվրոպատգամավորներ Ֆրանսուա-Քսավյե Բելամիի եւ Նատալի Լուազոյի ջանքերով: Նախնական զեկույցի համեմատ՝ Եվրոխորհրդարանը կարեւոր է համարել ընդգծել, որ խորապես մտահոգված է Լաչինի միջանցքի ներկայիս շրջափակմամբ, կոչ է անում Ադրբեջանի իշխանություններին՝ երաշխավորել այս միջանցքով տեղաշարժի ազատությունն ու անվտանգությունը, ինչպես նախատեսված է 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հռչակագրով, եւ ընդգծում Ադրբեջանի վրա դրված պարտավորությունները՝ նույն Միջազգային դատարանի 2023 թվականի փետրվարի 22-ի վճռով:

Բացի այդ, Եվրոխորհրդարանը նույն բանաձեւի երկրորդ կետում դատապարտում է Ադրբեջանի ղեկավարության պահվածքը, որը տապալում է խնդրի կարգավորման ուղղությամբ գործադրվող ջանքերը, մասնավորապես՝ սպառնալով նոր հարձակումներով, պարբերաբար խախտելով սահմանները, հավակնություններ ներկայացնելով այսպես կոչված՝ Արեւմտյան Ադրբեջանի տարածքին եւ հայ բնակչության հանդեպ ատելության

խոսք տարածելով՝ հատկապես կրթության ոլորտում, եւ կոչ է անում Ադրբեջանի ղեկավարությանը վերջ դնել նման պահվածքին:

Ըստ Գասպար Կարապետյանի, բոլոր փոփոխությունները կատարվել են ադրբեջանական զեկույցում, եւ պատժամիջոցների կետը ներառված է ադրբեջանական բանաձեւի հենց առաջին կետում, քանի որ Եվրոպական ժողովրդական խմբից՝ բուլղարացի զեկուցող Անդրեյ Կովաչեւի պատրաստած հայկական զեկույցն արդեն լավ մշակված էր:

«Չի կարելի ասել, որ ադրբեջանական զեկույցի հեղինակը՝ նույն Եվրոպական ժողովրդական խմբից խորվաթացի Ժելիանա Զովկոն, եղել է ադրբեջանամետ, բայց ադրբեջանական զեկույցում պատժամիջոցները ներառելը իրական մարտավարական նշանակություն ունի, որպեսզի Ադրբեջանը պարտավորվի կատարել այդ կետը»,- տեղեկացնում է Գասպար Կարապետյանը՝ պատմելով բանաձեւերի առավել նպաստավոր դարձնելու հնարավորությունները: «Կարգն այն է, որ զեկույցը պատրաստ լինելուց հետո այն քննարկվում եւ փոփոխվում է Եվրոխորհրդարանի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում: Եվ եթե զեկուցողը տեղեկանում է նոր դեպքերի, որոնք կա՛մ ինքն է նկատել, կա՛մ մենք ենք իրեն իրազեկել, կա՛մ դեսպանատունը, կա՛մ մեկ ուրիշը, ապա նա կարող է կատարել իր լրացումները, եւ Եվրոխորհրդարանը նույնպես իրավունք ունի իր փոփոխություններն առաջարկել, եթե դրանք 71 պատգամավոր ստորագրեն»,- պարզաբանում է նա: Եվ հենց այս փուլում է, որտեղ որ ՀՅԴ Հայ դատի գրասենյակը կարողանում է դրանց վրա առավելագույնս ազդել: ,Այսպիսով, հարկ է ընդգծել, որ Ֆրանսուա-Քսավյե Բելլամին եւ Նատալի Լուազոն մեծ ջանքեր են գործադրել մի շարք կարեւոր՝ Արցախի ինքնորոշման իրավունքի հիշատակման եւ Ադրբեջանի հանդեպ պահանջվող պատժամիջոցների առաջարկներն ավելացնելու ուղղությամբ: Եվ ես անձամբ մի քանի օր զանգահարել եմ պատգամավորներին՝ 71 ստորագրություններն ստանալ նրանց օգնելու համար: Մենք Բելամիի հետ աշխատել ենք պատժամիջոցների փոփոխությունների շուրջ»,- բացատրում է Գասպար Կարապետյանը:

Առանձնացնենք, որ բանաձեւերի ընդունմանը հաջորդող ելույթները նամանավանդ հատկանշական էին: Այսպես, Միք Ուոլեսը հայտարարել է, որ հայկական եւ ադրբեջանական տեքստերի միջեւ հնչերանգային տարբերություններն ապշեցնում են. «Եվ մենք չենք կարող բավականաչափ դատապարտել Ադրբեջանին իր ռազմական ագրեսիայի, քաղաքական եւ քաղաքացիական հասարակության ակտիվիստների հետապնդումների եւ մարդու իրավունքների բոլոր տեսակի խախտումների համար: ... Այնուամենայնիվ, բռնապետ եւ ագրեսոր Ադրբեջանը մեր մտերիմ գործընկերն է»,- հնչեցրել է պատգամավորը: Նմանապես, Քլեր Դալին ընդգծել է, որ Ադրբեջանի վերաբերյալ այս զեկույցն իսկապես հետաքրքիր է կարդալ: «Այն պարունակում է պատերազմական հանցագործությունների՝ խոշտանգումների եւ անդամահատումների, ռասիստական ատելության խոսքի Բաքվում գտնվող գրոտեսկային դժնդակ ռազմավարի պուրակի մասին մեղադրանքներ»,- թվարկել է եվրոպատգամավորը:

Հարկ է նշել, որ ի պաշտպանություն Ադրբեջանի՝ ելույթներ չեն արձանագրվել: Դրա պատճառներից մեկն է նաեւ «խավիարային դիվանագիտության» ազդեցության տակ լինելու պիտակավորման մտավախությունը:

Ի՞նչ է կշտամբում Ալիեւը Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակին

Եվրոխորհրդարանում ընդունված բանաձեւերը, այնուհանդերձ, անմիջական հետեւանք չունեն: «Սակայն այս բանաձեւերի արձանագրման կարեւորությունն այն է, որ ինչ-որ մի պահ դրանց հետ, այնուամենայնիվ, հաշվի նստելու են, եւ դրանք հանդիսանում են ճնշման համար միջոցներ: Այդ է պատճառը, որ Ալիեւը խիստ զայրացած է»,- պարզաբանում է Գասպար Կարապետյանը: «Սրանից 2-3 ամիս առաջ, երբ արտգործհանձնաժողովի հետ Եվրոխորհրդարանի պատվիրակությունը մեկնել էր Բաքու, արարողակարգից բոլորովին անդին՝ Ալիեւը իրենց ծանր խոսքեր ասաց, շատ ծանր, որպիսիք չի կարելի կիրառել քաղաքականության մեջ: Ամբաստանեց, նրանց հանդիմանելով, որ հայերի ձեռքին են գտնվում, որ Եվրոխորհրդարանը Հայաստանի խորհրդարանից էլ ավելի վատ բանաձեւեր ունի Ադրբեջանի հանդեպ: Նա այնքան կատաղեց, որ բարձրաստիճան ներկայացուցիչներին ասաց, թե՝ դուք ինքներդ չեք որոշումներ կայացնում, որ այդ որոշումները կայացնում է բրյուսելյան լոբբիստը, մենք՝ այսինքն, որ իրենք հանդիսանում են մեր գործակատարները: Ալիեւը բոլորովին այլ իրականության մեջ է գտնվում»:

Ի՞նչ է կշտամբում Ալիեւը, եթե այդ բանաձեւերն անմիջական ազդեցություն չունեն: Խնդրին այն է, որ Ալիեւը լավատեղյակ է, որ այսօրինակ բանաձեւերով ինքը եւ իր երկիրը վարկաբեկվում են, եւ եվրոպական կառույցների հետ բանակցելու ընթացքում դրանք Ադրբեջանի դեմ խաղաքարտեր են, որ իրենից ավելին կպահանջեն՝ մատնանշելով, որ ահա թե ի՞նչ է մտածում մեր խորհրդարանը: Այս ամենը վաղ թե ուշ իր դերակատարությունն ունի՝ լինի այսօր, լինի տասը տարի անց: Սրանք են Եվրոպայի ՀՅԴ Հայ դատի գրասենյակի հանդեպ այս բոլոր հարձակումների պատճառները:

Մարիամ ԽԱԹԼԱՄԱՋՅԱՆ

Սրբությունները պիտի արյան գնով պաշտպանել

Զենք եւ հավատք, բանակ եւ եկեղեցի, Աստված եւ հայրենիք: Ինչքանո՞վ են այս հասկացությունները համատեղելի, չե՞ն հակասում արդյոք իրար: Այս եւ այլ հարցերի շուրջ զրուցել ենք Պաշտպանության բանակի ավագ գնդերեց Տեր Վարդան քահանա Ներսիսյանի հետ: Նա Պաշտպանության բանակում իր ծառայությունը մատուցում է 2018թ. հուլիս ամսից, նախ՝ որպես Ասկերանի զորամասի գնդերեց, հետո՝ Խոջալուի զորամասի գնդերեց, իսկ հիմա՝ ԱՀ ՊԲ ավագ գնդերեց:

Եթե ծառայում ես քո հայենիքին, դա ծառայություն է նաեւ Աստծուն

Յուրաքանչյուրն ինքն է որոշում՝ ինչպես ծառայել, մեկը հոգեւորական դառնալով, մեկը հայրենիքին, մեկ այլ մարդ գիտությանը ծառայելով: Ծառայությունը հայրենիքին եւ Աստծուն տարբեր է լինում: Եթե ծառայում ես քո հայրենիքին, դա ծառայություն է նաեւ Աստծուն: Արդեն 25 տարի է, ինչ Զինված ուժերում հոգեւոր սպասավորություն գոյություն ունի, եւ ժամանակ առ ժամանակ հոգեւոր սպասավորները համալրվում են. այդպիսի մի հնարավորություն էլ ինձ էր ընձեռնվել: Վեհափառ Հայրապետի օրհնությամբ նշանակվել եմ զինված ուժերում ու սպասավորել եմ: Հետագայում ցանկություն եմ հայտնել շարունակել, Վեհափառ Հայրապետն ընդառաջել է իմ ցանկությանը եւ իր օհնությունն ու տնօրինությունն է, որպեսզի շարունակեմ իմ հոգեւոր ծառայությունը զինված ուժերում:

Արդյո՞ք համատեղելի են զենքը եւ հոգեւորականի առաքելությունը

Աստվածաշնչում այսպիսի հրահանգ կա, որ քո սրբությունները պիտի արյան գնով պաշտպանես: Մեր հայրենիքի սահմանները մեր սրբությունների սկիզբն են, մեր յուրաքաչյուր սրբություն սկսվում է առաջնագծից, հայրենիքի սահմաններից, այնտեղից է սկիզբ առնում մեր ընտանիքը, մեր հարազատների ապրելու վայրը: Կանգնելով սահմանին՝ պաշտպանում ենք մեր հարազատներին, քույրերին, եղբայրներին, մեր բարեկամներին, ընկերներին, այսինքն՝ մեր սրբությունները: Հոգեւորականը կարող է զենք վերցնել, գնալ առաջնագիծ եւ պաշտպանել մեր հայրենիքի սահմանները վայրագություններից: Մեր հակառակորդն ուզում է զավթել մեր հայրենիքը, եւ կարեւոր է, որ հոգեւորականը լինի զինվորների, սպաների կողքին հավասարապես, զենքը ձեռքին պայքարի:

Այդպես պայքարում էին նաեւ Վարդանանց քաջերը, եւ մենք պատմությունից գիտենք, որ Վարդանանց պատերազմի ժամանակ հոգեւորականները Ղեւոնդ երեցի եւ կաթողիկոսի գլխավորությամբ գտնվում էին առաջնագծում, մինչ ճակատամարտը պատարագ մատուցեցին, հաղորդություն բաժանեցին, զորքին մկրտեցին եւ նրանց հետ զենքը ձեռքներին պայքարի դուրս եկան: Այն ժամանակ էլ պայքարում էին հանուն հայրենիքի, հանուն հավատքի, այսօր էլ նորից պայքարում ենք հանուն հայրենիքի եւ հանուն հավատքի: Այս պայքարի մեջ հոգեւորականը պիտի լինի առաջամարտիկներից, այլ ոչ թե հետեւում կանգնի եւ միայն կոչերով հանդես գա. միայն կոչերով հայրենիք չեն փրկում, հայրենիք չեն պաշտպանում:

Նաեւ պիտի զանազանենք պայքարի բնույթը՝ նվաճողական՞ է, թե՝ պաշտպանողական: Հոգեւորականը չի մասնակցի նվաճողական պայքարի, մեկ այլ ազգի հողակտորը, հայրենիքը չի զավթի, իսկ պաշտպանողական պայքարին կմասնակցի եւ կլինի առաջնագծում: 44-օրյա պատերազմի, Ապրիլյան քառօրյա պատերազմի, Արցախյան առաջին գոյապայքարի ժամանակ էլ մեր հոգեւորականները եղել են առաջնագծում, եղել են զինվորների, մարտիկների կողքին եւ նրանց հետ միասին հավասարապես պայքարել են: Հոգեւորականը պիտի լինի իր հոտի, իր զավակների կողքին, իսկ իր զավակները գտնվում են առաջնագծում եւ պայքարի մեջ են հանուն հայրենիքի պաշտպանության:

Մեր հոգեւորականները գտնվում են իրենց զինվորների կողքին՝ առաջնագծում

Շատ եմ կարեւորում հոգեւորականի դերը զինված ուժերում, որովհետեւ այնտեղ ծառայում են մեր հասարակության տարբեր շերտերի, խավերի զինվորներ, զինծառայողներ, եւ երբեմն ինչ-որ խնդիրներ, միջադեպեր են լինում: Հոգեւորականը բանակում նրա համար է, որպեսզի օգնի յուրաքանչյուր զինծառայողի ճիշտ լուծումներ գտնել, իր լուման ներդնի մեր հայրենիքի պաշտպանությանը: Հոգեւորականը միայն քարոզչության համար չէ զորամասերում: Այո, պիտի Աստծո խոսքը քարոզի, բայց դրա հետ զուգահեռ՝ պիտի նաեւ իր հոգեւոր ծառայությունը մատուցի մեր հայրենիքին, լինի մեր զինվորի կողքին, նրա հոգսերով մտահոգվի, նրա ուրախություններով ուրախանա:

Եթե մարդ ցանկանում է հայրենիքին ծառայություն մատուցել, առաջնահերթ պիտի լինի առաջնագծում կանգնած զինվորի հետ եւ կիսի նրա հոգսը, առօրյան: Եվ այս առումով՝ մեր հոգեւորականները գտնվում են իրենց զինվորների կողքին, առաջնագծում եւ մտահոգվում են նրանց հոգսերով, ուրախանում նրանց ուրախություններով, փորձում են հայրենիքի հանդեպ իրենց ծառայությունը մատուցել եւ օգնել, որպեսզի զինվորները լսեն Աստծո խոսքի մասին, մասնակիցը լինեն հոգեւոր արարողություններին, դրանց միջոցով համախմբվեն, միասնականություն ձեռք բերեն, լինեն մեկ ընտանիք: Հոգեւորականը զորամասում քարոզում է, որ զորամասը բազմաթիվ անդամներից բաղկացած տուն է, ընտանիք, յուրաքաչյուր զինծառայող այդ ընտանիքի մի անդամ է, որտեղ պիտի տիրի սերը, համերաշխությունը, միասնականությունը, փոխհամաձայնությունը, փոխըմբռնվածությունը, որպեսզի կարողանան կատարել մեր հայրենիքի եւ մեր ազգի հանդեպ ծառայությունը:

Պատերազմի թեժ կետերում եղած զինծառայողներն ունեցել են որոշակի հոգեբանական խնդիրներ

Յուրաքաչյուր պատերազմ իր հետ բերում է հոգեբանական տրավմաներ, սթրեսներ: Պատերազմից հետո որոշակի դժվարություններ են ի հայտ եկել՝ կապված զինծառայողների բարոյահոգեբանական վիճակի հետ: Եթե մինչ պատերազմը անմիջական շփումն ավելի հեշտ եւ արագ էր ստացվում, պատերազմից հետո արդեն մի քիչ բարդությունների ենք հանդիպում, ու այստեղ խնդիր կար, որպեսզի հոգեւորականը կարողանար ճկուն մոտեցում դրսեւորել: Զինծառայողների քանակը շատ է, հոգեւորականը մեկն է: Յուրաքանչյուրին չես կարող նույն մոտեցումը ցուցաբերել, որովհետեւ մարդն իր էությամբ տարբեր է: Մի քանի րոպեի ընթացքում մի քանի զինծառայողների հետ պիտի շփվես, երկխոսես եւ պիտի կարողանաս արագորեն անհատական մոտեցում ցուցաբերել, որը պրակտիկայում մինչ պատերազմն այլ էր, պատերազմից հետո՝ այլ: Այդպիսի պրակտիկա ես նախկինում չեմ ունեցել, եւ պատերազմից հետո դա ինձ փորձառություն տվեց է՛լ ավելի լավ զինվորներին հասկանալու եւ է՛լ ավելի լավ նրանց հոգեկան աշխարհն ընկալելու:

Պաշտպանելու համար յուրաքանչյուրը պարտավոր է զենք վերցնել

Եթե մեկը կոչ է անում զենք չվերցնել, չպայքարել հանուն քո հայրենիքի, ապա դա ազգային անվտանգության խնդիր է առաջացնում: Եկեղեցին էլ է պայքարում այս արատավոր երեւույթների դեմ: Եթե Աստծո կամքը այնպիսի մի ժամանակաշրջան հասնենք, որ մեր որեւէ հարեւան երկիր չփորձի մեր տարածքը զավթել եւ խաղաղություն, համերաշխություն տիրի հարեւան ազգերի միջեւ, ապա վստահաբար կարիք չի լինի հայրենիքի սահմանները պաշտպանելու: Այդ ժամանակ կարիք չի լինի, որ մենք զենք վերցնենք եւ օրուգիշեր պահենք մեր հայրենիքի սահմանները: Սակայն, եթե ապրում ենք այնպիսի ժամանակաշրջան, որ եթե հայրենիքի սահմանները մեկ րոպե անգամ չպահվի, մեր հարեւան ազգը կհարձակվի եւ կխլի մեզանից, ապա այս պարագայում պիտի միանշանակ զենք վերցնի յուրաքանչյուր հայորդի եւ կանգնի առաջնագծում: Պաշտպանելու համար յուրաքանչյուրը պարտավոր է զենք վերցնել եւ պաշտպանել հայրենիքի սահմանները: Եկեղեցին էլ՝ հանձինս բանակում գնդերեցների առկայության, ընդունում է այն գաղափարը, որ պիտի պաշտպանես քո սրբությունները, քո հայրենիքը, քո ընտանիքը, քո քաղաքն ու գյուղը: Եկեղեցին իր օրհնությունն է տալիս հայրենիքի սահմանները պաշտպանող յուրաքանչյուր մարդու:

Եկեղեցին շարունակում է պահպանել մեր ազգայինը

Դարեր շարունակ եկեղեցին պահել է մեր ազգայինը եւ փոխանցել սերնդեսերունդ: Այսօր էլ եկեղեցին շարունակում է պահպանել մեր ազգայինը: Սակայն այսօր, չարի ու բարու պայքարի մեջ, այն կառույցը, որ հազարամյակներով պահպանել է մեր ազգային սովորությունները, դիմագիծը եւ փոխանցել սերունդներին, ենթարկվում է բազմաթիվ հարվածների: Շատ հարվածներ են հասնում եկեղեցուն՝ խանգարելու, խոչընդոտելու, իսպառ վերացնելու ազգայինի կրման, փոխացման առաքելությունը: Սակայն եկեղեցին, ինչպես առաջ, այնպես էլ հիմա պայքարում է այդ ուժերի, հարվածների դեմ ու շարունակում է իր առաքելությունը:

Մեր եկեղեցական արարողակարգի մեջ շատ ազգային սովորություններ են շարունակում կիրառվել, եւ եկեղեցական տոների ժամանակ ազգայինն է համախմբում հավատացյալներին: Եկեղեցին փորձում է այս ամենը է՛լ ավելի զարգացնել, լայն շերտերին հասու դարձնել: Դրա վառ ապացույցը Վարդանանց քաջ նահատակների հիշատակի օրն է, երբ եկեղեցին ազգային երգ-երաժշտությամբ, պարերի, ազգային միջոցառումների միջոցով հասարակությանը ծանոթացնում է մեր քաջերի, մեր պատմության հետ: Այսօր, ցավոք սրտի, մեր ազգային երաժշտությունն է փորձում անտեսվել, այս բազմազանության մեջ շատ քիչ հայորդիներ են լսում ազգային, հայրենասիրական, աշուղական երաժշտությունը: Եկեղեցին փորձում է այս ամենը պահել, պահպանել եւ տարբեր միջոցառումների ժամանակ մատուցել մեր հայրենակիցներին:

Հավատքի շնորհիվ կկարողանանք կերտել մեր վաղվա հաղթանակները

Պատերազմից հետո կարծես մեր հասարակության մոտ ամրացել է հավատն առ Աստված: Այդ հավատքի շնորհիվ է, որ մեր պատմության մեջ բազմաթիվ հաղթանակներ ունենք կերտված եւ այդ հավատքից հեռանալու արդյունքում է եղել այն, ինչ տեղի է ունեցել: Մեր հասարակությունը կարծես սթափվել, արթնացել է թմբիրից, քնից: Միայն հավատքի շնորհիվ մեր կկարողանանք կերտել մեր վաղվա հաղթանակները:

Այսօր Արցախի թեմը բազմաթիվ աշխատանքներ է իրականացնում՝ մեր հասարակության բոլոր շերտերին հաղորդակիցը դարձնելու թե՛ եկեղեցական արարողություններին, թե՛ մեր ազգային սովորություններին, միասնական աղոթքներ է կազմակերպում մեր հայրենիքի փրկության, միասնականության համար, խոկումներ, որտեղ մարդիկ հրավիրվում են գալ, խորհել, աղոթել, մտածել այն ամենի մասին, ինչն օգտակար կլինի մեր հայրենիքին:

Պատերազմից հետո թեմը հանձն առավ նաեւ կիրակնօրյա դպրոցների բացման գործընթացը: Այսօր Արցախում հազարից ավելի երեխաներ հաճախում են կիրակնօրյա դպրոցներ, որտեղ Աստծո խոսքն են լսում, սովորում են մեր ազգային երգ-երաժշտությունը, զբաղվում են ձեռագործ աշխատանքներով, նկարչությամբ: Յուրաքանչյուր շրջանում, եկեղեցում, որտեղ կա քահանա, իր համայնքում շրջայցներ է կատարում, անմիջականորեն շփվում է բնակչության հետ եւ կիսում յուրաքանչյուր արցախցու հոգսը, ուրախությունը, վիշտը: Հոգեւորականն ապրում է իր համայնքում, որտեղ նշանակվել է ծառայության:

Սակայն, լինելով պատերազմի մասնակից, կարող եմ ասել, որ պատերազմից հետո մեր հասարակության՝ դեպի եկեղեցի իրենց քայլերն ուղղելուն նաեւ նպաստել է այն հանգամանքը, որ օրհասական պահին եկեղեցին՝ հանձին իր հոգեւորականի, իր կողքին է: Պատերազմի դաշտում, երբ շուրջն են նայել, տեսել են հոգեւորականին եւ իրենց պես հասարակ մարդկանց, ովքեր պայքարում են հանուն մեր հայրենիքի: Այլ կրոնական կազմակերպության ներկայացուցիչներ գրեթե չկային առաջնագծում, եւ հասարակությունն իր վերլուծություններով հանգել է նրան, թե որն է ճշմարիտը, որն է մեր հայրենիքի փրկության համար մտահոգվող կառույցը եւ որն ուղղակի խաղաղ ժամանակ ինչ-որ քարոզչությամբ զբաղվողը:

Դրա ապացույցը պատերազմի ժամանակ զոհված, անհայտ կորած եւ վիրավորված հոգեւորականներն են: Նրանցից է Զինված ուժերի հոգեւոր առաջնորդի օգնական Նարեկ սարկավագ Պետրոսյանը, ով իր ծառայությունը մատուցում էր ՊՆ-ում, սակայն պատերազմի սկզբից Երեւանից եկել էր Արցախ, եղել տարբեր դիրքերում, տարբեր վայրերում եւ զոհվել Սոս գյուղի մատույցներում անօդաչու թռչող սարքի հարվածից: Իր հետ նաեւ զոհվել է Ռուստամ սարկավագը, ով ծառայություն էր մատուցում Մարտունու N 3 զորամասում: Անհայտ կորել է հայր Մկրտիչը, ով Մայր Աթոռում էր իր հոգեւոր սպասավորությունը մատուցում, սակայն կռվի ժամանակ կամովին եկել էր Արցախ, մեկնել առաջնագիծ: Սակայն Հադրութի Տող գյուղից դեպի Ֆիզուլի տանող ճանապարհին իր հետ կապն ընդհատվել է եւ մինչեւ այսօր անհայտ կորած է համարվում: Երեք սարկավագ տարբեր աստիճանի վիրավորում են ստացել: Բազմաթիվ դեպքեր կան, որ սարկավագները հրաշքով են փրկվել: Օրհասական պահին լքել զավակներին՝ դավաճանական քայլ կնկատվեր:

Տաթեւիկ ՍՂԱՋԱՆՅԱՆ

Հարափոփոխ պաշտոններ Արցախում

44-օրյա պատերազմից հետո Արցախի ներքին քաղաքական կյանքը բավականին հեղհեղուկ էր. մի քանի անգամ լրիվությամբ փոխվել է կառավարության կազմը, նշանակվել են նոր պետական նախարարներ ու նախարարներ: «Ապառաժ»-ը հակիրճ ներկայացնում է նրանց պաշտոնավարման ժամկետները եւ մեջբերումներ հանրային խոսքից: Նախորդ համարում ներկայացրել էինք ԱՀ պետական նախարարների, ԱՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի ու սոցիալական զարգացման եւ միգրացիայի նախարարությունների մասին:

ԱՀ առողջապահության նախարարություն

Պատերազմից հետո Արցախի Հանրապետությունում պաշտոնավարել են առողջապահության 3 նախարարներ: **Միքայել Հայրիյանը** առողջապահության նախարարի պաշտոնը ստանձնել է պատերազմից անմիջապես հետո՝ 2020 դեկտեմբերի 22-ին, այն թողել 2022թ նոյեմբերի 23-ին:

Նորանշանակ նախարարն իր առաջին ուղերձում մասնավորապես նշել է. «Առողջապահական համակարգը հնարավորինս կարճ ժամկետում պետք է ձերբազատվի այն բոլոր արատավոր երեւույթներից ու աշխատաոճ դարձած այն սովորույթներից, որոնք արժանացել ու շարունակում են արժանանալ հանրային պարսավանքի ու բժշկի աշխատանքի անգնահատելի նշանակությունը նվաստացնող վերաբերմունքի: Մենք պետք է լինենք հնարավորինս բաց, պատրաստ՝ հանրության հետ երկխոսության, խիզախ՝ լսելու առողջ քննադատություն, խոհեմ՝ շտկելու սխալներն ու վերացնելու բացերը, ճկուն՝ ունեցած հաջողություններն ամրապնդելու եւ դրանց հիմքի վրա նոր նշաձող կառուցելու համար»:

Միքայել Հայրիյանից հետո առողջապահության նախարարի ժամանակավոր պաշտոնակատար է նշանակվել **Արթուր Օհանջանյանը:**

2022թ. դեկտեմբերի 21-ին առողջապահության նախարար է նշանակվել **Սամվել Ավետիսյանը:** Բժիշկը պաշտոնից ազատվել է իր դիմումի համաձայն՝ 2023թ. մարտի 23-ին: Սամվել Ավետիսյանը ոլորտում իր անելիքների, նոր ծրագրերի ու փոփոխությունների մասին հրապարակավ չի խոսել: Իսկ հրաժարականի ուղերձում, անդրա-

դառնալով պաշտոնի ստանձնմանը, գրել է. «Ստանձնելով Արցախի Հանրապետության առողջապահության համակարգի ղեկավարումը, առանց ավելորդ ցուցադրողականության, պոպուլիզմի, առանց համակարգում լուրջ կադրային վայրիվերումների, իսկույն սկսել ենք գործել՝ բացառապես ի շահ մեր ժողովրդի»:

Նա նաեւ հակիրճ ներկայացրել է պաշտոնավարման 70 օրվա ընթացքում կատարած աշխատանքը. «Շրջափակման պայմաններում շուրջ 70 օր ղեկավարելով Արցախի Հանրապետության առողջապահության համակարգը, հրատապ լուծումներ ենք տվել բազմաթիվ կենսական հարցերի, որը, սակայն, չի խանգարել սկսել ոլորտում ինստիտուցիոնալ փոփոխություններ՝ սեղմաժամկետ, միջնաժամկետ եւ երկարաժամկետ ծրագրեր»:

2023թ. մարտի 15-ին առողջապահության նախարար է նշանակվել եւ մինչ օրս պաշտոնավորում է **Վարդան Թադեւոսյանը:**

Պաշտոնավորման սկզբում նորանշանակ նախարարն այցելել է հանրապետության տարբեր բուժհաստատություններ, ծանոթացել առկա խնդիրներին ու շրջափակման հետեւանքով առաջացած մարտահրավերներին: Նախարար Թադեւոսյանը իր պլանների եւ անելիքների մասին դեռեւս հրապարակավ չի խոսել:

ԱՀ գյուղատնտեսության նախարարություն

Հետպատերազմյան շրջանում բավականին հաճախ են փոխվել նաեւ գյուղատնտեսության ոլորտի պատասխանատուները: 2020թ. դեկտեմբերի 28-ին Արցախի Հանրապետության էկոնոմիկայի եւ գյուղատնտեսության նախարար է նշանակվել **Աշոտ Բախշիյանը:** Մինչ այդ Բախշիյանը զբաղեցնում էր գյուղնախարարի պաշտոնը: Կառավարության կառուցվածքի փոփոխության համաձայն՝ Էկոնոմիկայի եւ արտադրական ենթակառուցվածքների նախարարությունը միացավ գյուղատնտեսության նախարարությանը եւ դարձավ Էկոնոմիկայի եւ գյուղատնտեսության նախարարություն: Նախարարը 2021թ. փետրվարի 23-ին հայտարարել է զբաղեցրած պաշտոնից ազատվելու մասին: 2020թ. օգոստոսի 19-ին հրավիրված ընդլայնված խորհրդակցության ժամանակ նախարարը հայտարարել է. «Առաջին անգամ պետության կողմից որպես աջակցություն գյուղատնտեսության ոլորտին տրամադրվելու են աննախադեպ խոշոր միջոցներ: Դա ուղերձ է մեր հայրենակիցներին՝ ինչպես տեղի, այնպես էլ Սփյուռքի,

հանդես գալ սեփական ներդրումներով գյուղատնտեսության ոլորտում՝ այդպիսով նպաստելով Արցախի տնտեսության բարգավաճմանն, ու հետեւաբար, պարենային անվտանգության ապահովմանը, ինչը մեզ համար առաջնային ռազմավարական խնդիր է»:

2021թ. մարտի 2-ին Էկոնոմիկայի եւ գյուղատնտեսության նախարար նշանակվեց **Արմեն Թովմասյանը:**

«Այս դժվար ժամանակահատվածում, դիմակայելով մեր երկրի առջեւ ծառացած բազում արտաքին ու ներքին մարտահրավերներին, Արցախի Հանրապետության էկոնոմիկայի եւ գյուղատնտեսության նախարարությունն անշեղորեն շարունակել է կյանքի կոչել բազմաթիվ զարգացման ծրագրեր եւ գրանցել որոշ դրական արդյունքներ. 2021 թվականին պետական աջակցությամբ Արցախում հիմնվել են 75 հա նոր պտղատու եւ հատապտղատու այգիներ, արձանագրվել է անասնագլխաքանակի աճ՝ 12-30 տոկոսով»,- գյուղատնտեսության ոլորտի աշխատողներին ուղղված իր ուղերձում 2021թ. հոկտեմբերի 10-ին նշել է նախարարը:

Արցախի նախագահի 2022 թվականի փետրվարի 10-ի հրամանագրով Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարար է նշանակվել **Նորայր Մուսայելյանը:**

«Մենք հետեւում ենք պատերազմից հետո որդեգրած քաղաքական գծին. դա պատերազմի հետեւանքների վերացումն է, ջերմատնային տնտեսությունների կառուցման եւ այգեգործության խթանումը եւ տեղական նախրի բարելավումը: Այս նպատակով կգործեն համապատասխան ծրագրեր եւ դրանցից բխող միջոցառումներ, ակտիվորեն կկիրարկվեն սուբսիդավորման մեխանիզմներ: Պարտաճանաչ եւ ոչ պարտաճանաչ շահառուների դասակարգման ու այլ զսպող մեխանիզմների կիրառման միջոցով կապահովվի պետական ֆինանսական միջոցների նպատակային ծախսումը»,- 2022թ. մարտի 3-ին հարցազրույցում ասել է Ն. Մուսայելյանը:

Նախարարը պաշտոնից ազատվել է 2022թ. նոյեմբերի 22-ին: Արցախի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի պարտականությունները ժամանակավորապես վերապահվել են նախարարի առաջին տեղակալ **Տիգրան Առստամյանին:**

2022թ. դեկտեմբերի 29-ին ԱՀ գյուղատնտեսության նախարար է նշանակվել Հրանտ Սաֆարյանը: Ազատվել է 2023թ. մարտի 8-ին:

Մարտի 8-ին **Հրանտ Սաֆարյանը** հայտարարել է, որ աշխատանքի անցնելիս առաջնորդվել է միայն մեկ մղումով՝ անել իրենից կախված ամենը՝ օրհասական այս պահին մեր երկրին օգտակար լինելու հրամայականով. «Պաշտոնավարման առաջին իսկ րոպեից լծվել եմ Արցախի ամբողջական շրջափակման պայմաններում առկա բազմաթիվ ոլորտային խնդիրների հաղթահարմանն ուղղված ծրագրերի մշակմանը, ներդրմանը, առկա խնդիրների վերլուծության հիման վրա ընթացիկ ծրագրերի տեղայնացմանն ու նոր մեխանիզմների գործարկմանը, որից կցանկանայի կարեւորել ցանքաշրջանառության իրականացումն ըստ գոտիականության, ինչի արդյունքում, վստահեցնում եմ, ոլորտային բարեփոխումներն իրենց երկար սպասեցնել չեն տա: Առանց խոսքիս ենթատեքստ հաղորդելու՝ ուղիղ կասեմ. նախարար նշանակելով ու հանելով չէ, որ պետք է լուծվեն մեր երկրի առաջ ծառացած բարդագույն խնդիրները: Համակարգային փոփոխությունների փոխարեն անհատներ տեղափոխելով չէ, որ պիտի բարելավվի Արցախի քաղաքացու կյանքը, այն էլ՝ այս ծայրաստիճան բարդ իրավիճակում, երբ Արցախն արդեն 3 ամիս է՝ շրջափակված է, իսկ ներսում հազարավոր չլուծված խնդիրներ ունենք»:

Հրանտ Սաֆարյանից հետո՝ 2023թ. մարտի 8-ին ԱՀ գյուղատնտեսության նախարար է նշանակվել **Գեորգի Հայրիյանը:**

«Հատուկ ուշադրություն ենք դարձնելու վերամշակման ենթակա բանջարաբոստանային կուլտուրաների մշակմանը»,- 2023թ. ապրիլի 5-ին հարցազրույցում ասել է նորանշանակ նախարարը:

ԱՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն

2020թ. դեկտեմբերի 18-ին Արցախի Հանրապետության տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար է նշանակվել **Հայկ Խանումյանը:** Պաշտոնից ազատվել է 2022թ. նոյեմբերի 23-ին:

«3 տարվա ընթացքում առնվազն 6 հազար բնակարան կկառուցվի: Հույս ունեմ՝ առաջիկա 2-3 շաբաթների ընթացքում մի քանի 100 բնակարան Ստեփանակերտում, որ դեռ պատերազմից առաջ էլ կառուցվում էին շենքերը, կավարտվեն եւ հարյուրավոր ընտանիքներ կտեղավորվեն, որը մի քիչ կթեթեւացնի հոգսը, եւ հույս ունեմ, որ այս տարվա ընթացքում 2 հազար 500-ի կարգի բնակարան, թե՛ գյուղերում հիմնանորոգվող բնակֆոնդին է վերաբերում, թե՛ Ռուսաստանի կողմից տրամադրվելիք 1000 հավաքովի տներին է վերաբերում, թե՛ «Հայաստան» համահայկական հիմնադրամի 110 միլիարդ դրամի ծրագրին է վերաբերում այս տարվա չափաբաժիններին, կկարողանանք տեղավորել եւ մյուս տարիներին՝ հաշվի առնելով շինարարության տեմպերը, ընթացքը, քանի որ տենդերները հիմնադրամի կողմից նոր են սկսվել հայտարարվել եւ հիմնական շինարարությունը դեռեւս առջեւում է, տեղի կունենան»,- 2021թ. մայիսի 1-ին տված հարցազրույցում ասել է Հադրութի շրջանի Հին թաղեր եւ Խծաբերդ բնակավայրերի հանձնումից մի քանի օր անց ԱՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար նշանակված, նախկինում ընդդիմադիր գործիչ Հայկ Խանումյանը, ով իր պաշտոնավարման ընթացքում պարբերաբար հայտնվում էր չարաշահումների, պետությանը հասցված վնասների գործերով տարբեր դատական գործընթացների առանցքում:

Հայկ Խանումյանին ազատելուց հետո տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարի պարտականությունները ժամանակավոր վերապահվել են նախարարի առաջին տեղակալ **Վարդան Բեգլարյանին:**

2022թ. դեկտեմբերի 29-ին ԱՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար է նշանակվել **Սուրեն Գալստյանը:** Վերջինս դեռեւս հրապարակային ելույթներ չի ունեցել:

Շարունակելի

Հոդվածը պատրաստել է Տաթեւիկ Աղաջանյանը՝ ԱրՊՀ լրագրության 4-րդ կուրսի ուսանողուհիներ Ասպրամ Ավանեսյանի, Քրիստինե Դահիրամանյանի եւ Ինեսսա Մայիլյանի հետ համագործակցաբար

Հայապահպանության վտանգը միայն սփյուռքում չէ. Հերմինե Ավագյան

Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Նյու Ջերսիի մասնաճյուղի հրավերով օրերս ԱՄՆ-ում էր Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի տնօրեն, երիտասարդ գրող Հերմինե Ավագյանը: Այցի մանրամասների եւ տպավորությունների մասին «Ապառաժ»-ը զրուցել է նրա հետ:

- Մարտի 23-ից մինչեւ ապրիլի 3-ը Դուք, որպես երիտասարդ գրող, հրավիրվել եք ԱՄՆ: Ո՞վ է կազմակերպել այցը, ովքե՞ր էին Ձեզ հետ մեկնել եւ ո՞րն էր այցի հիմնական նպատակը:

- Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Նյու Ջերսիի մասնաճյուղի կողմից հրավեր ստացա՝ մասնակցելու «Վերածնունդ» խորագրով միջոցառմանը, որը նվիրված էր հանուն հայրենիքի անմահացած մեր հերոսների հիշատակին: Միջոցառումը գրական-մշակութային էր, բաղկացած էր թե՛ համերգային ծրագրից, թե՛ գրական մասից: Համերգային ծրագրի ընթացքում ելույթ ունեցան Համազգայինի Նյու Ջերսիի «Նաիրի» պարախումբը, ազգային պարերի վարպետ Գագիկ Գինոսյանը, ամերիկահայ հայտնի երաժիշտ, երգահան Արա Դինքջյանը, երիտասարդ դուդուկահար Արսեն Պետրոսյանը, երգիչ Արաբո Իսպիրյանը, երգչուհի Նունե Եսայանը: Միջոցառման գրական մասում ընդգրկված էին ընթերցանություններ իմ «Օրացույցից պոկված օրեր» գրքից, թեման՝ պատերազմ, հայրենիք, խաղաղության երազանք…Մեծ պատասխանատվություն էր ինձ համար՝ որպես գրող ելույթ ունենալ, երբ իմացա, որ հազար հոգուց ավելի մարդ կա դահլիճում եւ նրանք պիտի ունկնդիր լինեն իմ ստեղծագործությունների ընթերցմանը: Առաջին իսկ ելույթից արդեն զգացի, որ անբացատրելի ոգի ու ջերմություն կա դահլիճում, մարդիկ գիտեին, թե ինչի համար են եկել, ու դա գոտեպնդող էր: Այսօր Սփյուռքում շատ դժվար է այդքան հանդիսատես հավաքելը, նրանց հայկական շնչով, ազգայինով ոգեշնչելը, բայց Համազգայինի Նյու Ջերսիի մասնաճյուղը դա արեց, ու ես շնորհակալ եմ, որ առիթ ունեցա այդ գեղեցիկ գործի մի փոքրիկ մասնիկը դառնալ: Տպավորիչ էր հատկապես 4-5 տարեկան հայ մանուկներին տեսնել ազգային պար պարելիս, տեսնել, թե ինչպես են օտար ափերում ծնված ու մեծացած իրենց ծնողները ջանք ու եռանդ ներդնում, որպեսզի իրենց երեխաներին հայ մեծացնեն: Քաջալերող է Համազգայինի ջանքերն ու աշխատանքը ներկայիս ուծացման վտանգի պայմաններում հայ մշակույթի պահպանման ու տարածման ուղղությամբ: Ես այդ աշխատանքում միասնություն տեսա եւ աշխատելու պատրաստակամություն: Նման կարեւոր գործին պետք է սատարել, օգտակար լինել մեր կարողություններով, խորհուրդներով, բարի կամքով: Գովեստի պարապ խոսքեր չեն, որ ասում եմ, այլ անկեղծ տպավորություններ, որ ունեցա: Միջոցառումից հետո նորից ինձ մոտ հույս արթնացավ, որ հայի ազգային տեսակը չի կարող պարտվել, որ մի օր այդ տեսակն է բերելու մեր սպասված լուսաբացը: Պետք է փայփայել այդ տեսակը:

Տարիներ առաջ Նյու Ջերսիի «Նաիրի» պարախումբն այցելել էր Արցախ, եւ որպես Համազգայինի Արցախի գրասենյակի պատասխանատու՝ կազմակերպել էի նրանց համերգները Ստեփանակերտում, Մարտունիում եւ զորամասերից մեկում: Հանդիսատեսը տպավորված էր՝ տեսնելով, թե ինչպես են օտար ափերում փորձում կառչած մնալ ազգային արմատներից: Հիմա՝ տարիներ անց, առիթ ունեցա նրանց ելույթը տեսնելու օտար ափերում: Տարբեր զգացողություններ էին: Երբ նրանք Արցախում էին պարում, ես հպարտություն էի զգում, որ Համազգայինի մեծ ընտանիքի անդամն եմ, երբ նրանց տեսա օտար ափերում պարելիս, ես հասկացա, որ դա հպարտություն չէ, այլ պատասխանատվության անչափելի զգացում, որովհետեւ Համազգայինը մեզ սովորեցնում է մեր ամեն մի քայլի համար «հաշվետու» լինել հայրենիքին, գործել միայն ու միայն համընդհանուր նպատակի գիտակցումով, սովորել ու սովորեցնել, կրթվել ու կրթել, պայքարել մշակույթով, գիտելիքով:

- Այցի ընթացքում որտե՞ղ եք հասցրել լինել, ինչպիսի՞ միջոցառումների եք մասնակցել:

- Նյու Ջերսիի «Վերածնունդ» միջոցառումից հետո այցելեցի Նյու Յորք: Նյու Յորքի Համազգայինի մասնաճյուղի եւ Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու համատեղ նախաձեռնությամբ հանդիպում ունեցա տեղի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, որտեղ ոչ միայն ներկայացվեցին իմ գրքերը, այլեւ՝ Արցախի իմ գրչընկերների գրքերից: Միջոցառման կարեւոր մասն էր նաեւ Համազգայինի Արցախի գրասենյակի նկարչության խմբի երեխաների նկարների ցուցահանդեսը: Երեխաների հետ պայմանավորվել էինք բարի գործ կատարել վաճառեցինք բոլոր նկարները եւ ամբողջ համեստ գումարը նվիրատվություն արեցի Համազգայինի Կենտրոնական վարչությանը, որովհետեւ մեր մանուկների ծնողները քաջ գիտակցում են, թե ինչ ծանր վիճակում են Սիրիայի հայ երեխաները, Լիբանանի հայկական ճեմարանն ու մանկապարտեզը եւ մնացած այլ կարեւոր ծրագրերը, որոնք այսօրվա դժվար պայմաններում կատարում է Համազգայինի աշխարհասփյուռ կառույցը: Մենք մեզ այդ ամենի մաս ենք զգում, եւ որքան էլ տաօրինակ թվա, այո, շրջափակված Արցախում ստեղծագործող մեր մանուկները նաեւ ձեռք մեկնել գիտեն, որովհետեւ Սփյուռքը մերն է, մենք՝ Սփյուռքինը, ու այդ միասնությունն է, որ հարատեւելու գրավական է: Նյու Յորքում ունեցած հանդիպման ընթացքում կայացավ նաեւ իմ երկու՝ «Օրացույցից պոկված օրեր» եւ «Վազում եմ, սպասիր» գրքերի շնորհանդեսը: Առիթ ունեցա խոսելու նաեւ Արցախի իմ գրչընկերների գրքերից եւ նվիրելու այն գրքերը, որոնք կարողացել էի հետս տանել: Ներկաներին պատմեցի Համազգայինի Արցախի գրասենյակի վեցամյա գործունեության մասին, ներկայացրի առաջիկա մեր անելիքները:

Կազմակերպիչները հյուրասիրություն էին պատրաստել եւ անմիջական մթնոլորտ ստեղծել, որի շնորհիվ ջերմ ու մտերմիկ զրույց ստացվեց: Շնորհակալ եմ Նյու Յորքի Սբ. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու հովիվ Մեսրոպ քահանա Լագիսյանին, ով միշտ Համազգայինի կողքին է եւ ջանք ու եռանդ չի խնայում Հայրենիքին օգտակար լինելու համար:

Նյու Յորքում կայացած հանդիպումից հետո ՀՅԴ Արեւելյան ԱՄՆ-ի ԿԿ ներկայացուցիչ Անի Չաղլասյանի նախաձեռնությամբ այցելեցի Վաշինգտոն, որտեղ ԱՄՆ Կոնգրեսի գրադարանին նվիրեցի իմ հեղինակային գրքերը, ինչպես նաեւ՝ Արցախի իմ գրչընկերների գրքերից: Այսուհետ հայ ընթերցողը կարող է մեզ կարդալ նաեւ այնտեղ, ու հավատացած եմ, որ այս գրքերի շարքը դեռ համալրելու ենք նորերով:

Վաշինգտոնում այցելեցի նաեւ Հայ դատի գրասենյակ, հանդիպում ունեցա Հայ դատի հանձնախմբի խոսնակ Էլիզաբեթ Չուլջյանի հետ, ծանոթացա գրասենյակի աշխատանքներին:

Հետաքրքիր էր նաեւ այցելությունս Բոստոն, որտեղ հնարավորություն ունեցա ականատես լինելու «Հայրենիք» ամսագրի գործունեությանը, ծանոթանալու հարուստ արխիվին: Հատկանշական է, որ երբ թերթում ես հարյուր տարի առաջվա մարտ-ապրիլ ամիսների համարները, իրականությունն այնքան նման է մեր իրականությանը, մեր Հայրենիքի այսօրվա օրհասական վիճակին: Պարզվում է՝ այդպես էլ դասեր չքաղեցինք պատմությունից, դրա համար էլ պատմությունը միշտ կրկնվում է մեզ համար…

Խմբագրությունում բոլորի թեման Արցախն էր, թերթի առաջին էջերում Արցախի շրջափակումն էր՝ երկու լեզուներով: Ուրախ էի «Հայրենիք»-ի այդօրվա համարում տեսնել Արցախից ուղարկված թղթակցությունները ընկերներիս՝ Սիրանուշ Սարգսյանի եւ Վահագն Խաչատրյանի հեղինակությամբ:

- ԱՄՆ այցի ընթացքում բազմաթիվ հանդիպումներ եք ունեցել Սփյուռքի մեր հայրենակիցների հետ: Ո՞րն էր ձեր պատգամը Սփյուռքի մեր հայրենակիցներին:

- Ես տեսա ձուլման վտանգը եւ պայքարելու կամքը. դա դաժան պայքար է, հատկապես՝ մեր օրերում, բայց մենք ուրիշ ուղի եւ ուրիշ ելք չունենք: Եթե ուզում ենք որպես ազգ գոյություն ունենալ, պիտի պայքարենք ամեն գնով:

Մեզ անընդհատ թվում է, թե հայապահպանության վտանգը միայն Սփյուռքում է, բայց երբ խորազնին նայեք հայրենիքից ներս, կտեսնեք, որ հայապահպանության խնդիրը նաեւ այստեղ է՝ հայրենիքի ներսում, կտեսնեք, որ օտարածին բարքերն ու վարքը արդեն մեր ներսում են, դրանք կլանում-տանում են ազգայինը, իսկ պայքարողները շատ քիչ են: Եթե հայրենիքում հային հայ պահելու խնդիր չլիներ, այսօր այս ճակատագրական օրերին չէինք հասնի: Եկեք նախ միասին մեզ փրկենք, հետո մտածենք Սփյուռքի հային փրկելու մասին: Եկեք միասին նախ հայրենիքը փրկենք, որ Սփյուռքի հայը վերադառնալու տեղ ունենա:

Այսօր արդեն անհաշվելի օրեր են, ինչ Արցախը գտնվում է շրջափակման մեջ: Հայրենիքում ապրող քանի՞ հայ է գիտակցում, որ ոչ թե Արցախը մայր Հայաստանին կապող կյանքի ճանապարհն է փակ, այլ համայն հայության կյանքի ճանապարհն է փակ, քանի՞ հայ է գիտակցում, որ մեր ժողովրդի լինելիության ճանապարհը Արցախով է անցնում: Եթե խորապես չենք հասկանում դա, ուրեմն մեզ համար մեկ է, թե աշխարհի վրա որպես ազգ ի՞նչ անունով ենք ապրելու, կամ լինելո՞ւ ենք առհասարակ: Այս գիտակցումը նախ հայրենիքում պիտի լինի, հետո արդեն սկսենք Սփյուռքին պատգամներ ու դասեր տալ…

- Ինչպիսի՞ տպավորություններով վերադարձաք, եւ ո՞րն է Ձեր սրտի խոսքը մեր ընթերցողին:

- Պատերազմից հետո հազվադեպ մարդկանց ու շատ քիչ երեւույթների նկատմամբ է հավատս մնացել, որովհետեւ հասկացել եմ՝ շահը, փառքը, նախանձը, բամբասանքը, չարությունը բույն են դրել մեր մեջ, ու այդ բույնն է ամեն ինչ քայքայում: Համազգայինի միջավայրում իրական սեր տեսա հայրենիքի նկատմամբ, որը գործով է արժեւորվում, գործով է ապացուցվում, ես սեր տեսա ու սեր զգացի, եւ վերադարձա հավատով, որ այդ սերն է մի օր հաղթելու, որ հայրենիք-սփյուռք միասնությունն է մեր ապագայի միակ ճանապարհը: Ոչ միայն աշխարհի բոլոր ճանապարհները պիտի բերեն հայրենիք, այլեւ՝ մտքի ու հոգու բոլոր ճանապարհները: Շատ քիչ է հայրենիքում սոսկ ապրելը, հայրենիքն էլ մեր մեջ պիտի ապրի: Եթե մեր ներսում հայրենիք չունեցանք, հայրենի հողի վրա ապրելը իմաստազուրկ է եւ ունայն: Մեր ներսի հայրենիքը պիտի լինի մեր ներքին ձայնը, մեր քայլերն ու արարքներն առաջնորդողը, մեր պատասխանատվության ճիչը, մեր ներսի իրական սերը, որովհետեւ եթե մեր մեջ սերը չարթնանա, վաղվա օրը հազիվ թե մերը լինի…

- Վերջին հարցի փոխարեն կիսվեք մեզ հետ Ձեր վերջին ստեղծագործություններից մեկով:

- Սիրով կկիսվեմ այս օրերին գրված իմ բանաստեղծությամբ:

***

Քեզ ինչո՞վ ծածկեմ,
Երկի՛ր, որ չմրսես…
Քեզ ծածկողները հեռացան լուռ,
նրանց մարմինները գրկել ու չես տաքանում.
դրսում շատ է ցուրտ,
այս բուքը հեռվից է գալիս…
Վեր կաց,Երկի՛ր,
փոխիր հագուստդ,
քեզ տաք հագուստ է հարկավոր,
որ ամուր կոճկես,
որ երազանքներդ ցած չթափվեն…
Ես քեզ վաղուց սեր չեմ խոստովանել,
Երկի՛ր,
մեծացել ենք դրա համար, ժամանակ էլ չկա,
քեզ հագուստ կարող է հիմա պետք,
որ շատ գրպաններ ունենա.
ցավերդ չէ, ոչ էլ դավերդ,
փառքդ կլցնես մեջը, ուրիշ ոչ մի բան:
Երեխայի պես արթնացիր այսօր,
նորից քայլել սովորիր, նորից խոսիր
ու առաջին բառդ մի տուր ուրիշին,
տվեցիր, մյուսը հայերեն չի լինի հաստատ…
Քո ծառերին վաղը գարուն կգա,
Երկի՛ր,
բողբոջներդ պիտի բացվեն,
բայց քեզ ձմեռվա հագուստ է դեռ պետք,
որ ծաղկած ծառերիդ նորից ձյուն չգա…
Ահա կանգնած եմ քո մեծության դեմ
որպես փոքրիկ ավազահատիկ,
որ քամիները մի օր կտանեն.
ասա, ինչո՞վ ծածկեմ քեզ,
ծածկեմ, չմրսես,
ծածկեմ, որ մնաս…

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վահրամ Փափազյանի անվան թատրոնը՝ 90 տարեկան

90-ամյա կենսագրություն ունեցող՝ Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնը հիմնադրվել է 1932 թվականին՝ Կ. Ալվարյանի ղեկավարությամբ: Առաջին բեմադրությունը եղել է Վաղարշյանի «Օղակում» պիեսի բեմադրությունը:

Երկարամյա գործունեության ընթացքում թատրոնում ստեղծվել են հարյուրավոր բեմադրություններ, որոնք ներկայացվել են ոչ միայն Արցախում, այլ նաեւ Հայաստանում, Վրաստանում, Լիբանանում, Ավստրիայում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Ռուսաստանում:

Թատրոնը միշտ էլ իր ուրույն տեղն է ունեցել հայ ժողովրդի մշակութային կյանքում: Աշխարհի տարբեր անկյուններում սփռված հայ ժողովրդին համախմբողը, ազգային ինքնության պահպանողը, շատ հաճախ՝ եկեղեցիների ու դպրոցների հետ միասին շարունակում է մնալ նաեւ թատրոնը: Այսօր էլ Արցախում՝ շրջափակման պայմաններում թատրոնը, շարունակելով իր գործունեությունը, փորձում է իր ներկայացումներով գոտեպնդել, հոգեւոր սնունդ փոխանցել հասարակությանը:

Թատրոնի 90-ամյա հոբելյանի, պատերազմից հետո եւ շրջափակման պայմաններում նրա գործունեության, առկա խնդիրների եւ հաջողությունների մասին խոսել ենք Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոնի տնօրեն Արմեն Հարությունյանի հետ:

- Պարո՞ն Հարությունյան, այս տարի լրանում է Ստեփանակերտի դրամատիկական թատրոնի 90-ամյակը: Ըստ Ձեզ, ո՞րն է թատրոնի դերը հասարակության մշակութային զարգացման եւ հոգեւոր դաստիարակության գործում:

- Ընդհանրապես, մեր թատրոնը իր ստեղծման օրվանից եւ հատկապես խորհրդային ժամանակաշրջանում մեծ դեր է խաղացել Արցախի ժողովրդի հայապահպանության, մատաղ սերնդի հայեցի դաստիարակման, հասարակության հոգեւոր ամրապնդման ու մշակութային զարգացման գործում եւ մինչեւ հիմա այդ առաքելությունը շարունակում է կատարել:

- Ստեփանակերտի դրամատիկական թատրոնը կարողացել է հասարակությանը տալ անվանի եւ ժողովրդի կողմից սիրված արտիստներ, նաեւ պատիվ է ունեցել հյուրընկալել հայտնի արտիստների, ինչպես օրինակ՝ Վահրամ Փափազյանը, Հովհաննես Աբելյանը, Արուս Ոսկանյանը, Հրաչյա Նեսիսյանը եւ այլք: Ինչպիսի՞ ավանդ է թողել թատրոնն իր 90-ամյա գործունեության ընթացքում:

- Իր 90-ամյա պատմության ընթացքում թատրոնը թողել է մեծ ժառանգություն: Մեր թատրոնի խաղացանկը, մեր լեգենդներին՝ Մարգո Բալասանյանին, Արա Հարությունյանին, Բենիկ Օվչյանին եւ մյուսներին առ այսօր հիշում ու գնահատում են: Թատրոնը նաեւ ներկայացրել է արցախի թատերարվեստն արտերկրում՝ Ֆրանսիայում, Ավստրիայում, Բելգիայում, Ռուսաստանում, Գերմանիայում: Այսօր էլ հանդիսատեսը մեծ հաճույքով է ներկայանում՝ բեմադրություններ դիտելու եւ անհամբեր սպասում նոր բեմադրությունների:

- Չարաբաստիկ պատերազմն իր ազդեցությունն է թողել յուրաքանչյուր ոլորտի վրա: Ինչպիսի՞ ազդեցություն է թողել այն թատրոնի գործունեության եւ խաղացանկի վրա:

- Պատերազմն իր բացասական ազդեցությունն է թողել նաեւ թատրոնի վրա, քանի որ պատերազմից հետո մեր երիտասարդ դերասանների մի մեծ մասը տեղափոխվել է ՀՀ, ինչի արդյունքում մեր խաղացանկն ամբողջությամբ զրոյացել է, որովհետեւ բոլորն էլ մասնակից էին տարբեր ներկայացումների: Բայց մենք կարճ ժամանակում կենտրոնացրել ենք մեր ուժերը, ընդունել նոր դերասանների եւ պատերազմից հետո 7 նոր բեմադրություն հանձնել հանդիսատեսի դատին: Թատրոնն իր պլաններից ընդհանրապես չի շեղվել՝ տարվա ընթացքում պարտադիր 3 նոր ներկայացում բեմադրելով, չնայած չկա պետական որեւէ աջակցություն: Ֆինանսավորում չկա, ոչ մի հարցում աջակցություն չկա. մենք մեր ուժերով փորձում ենք մեր պլանով աշխատել:

- Արցախը՝ արդեն 4 ամիս է, ինչ գտնվում է շրջափակման մեջ: Ինչպե՞ս է անդրադառնում շրջափակումը թատրոնի գործունեության վրա, ի՞նչ խնդիրներ է ստեղծում, որքանո՞վ է կարեւոր թատրոնի գործունեությունն այս պայմաններում եւ ո՞րն է թատրոնի ասելիքը հասարակությանը:

- Շրջափակման պայմաններում թատրոնը մեկ օր անգամ չի դադարեցրել իր գործունեությունը: 2022 թվականն ավարտել ենք «Ձմեռային հեքիաթ» մանկական միջոցառումներով: Այդ ներկայացումներով եղել ենք նաեւ Ճարտարում, սակայն քանի որ վառելիքի խնդիր կա, փորձել ենք մի ներկայացման ընթացքում ներգրավել նաեւ հարակից 6 գյուղերի երեխաներին: Հունվարին եղել ենք Մարտակերտ քաղաքում: Սակայն այս պահին վառելիքի բացակայության հարցը շատ ավելի լուրջ է, ինչը բացասաբար է անդրադառնում մեր հյուրախաղերի հաճախականության վրա:

Նախորդ տարվա վերջին ունեինք նաեւ հայրենասիրական ներկայացում «Անմահների դիրքը», որից հետո նաեւ հանդիսատեսի խնդրանքով որոշեցինք ավելի թեթեւ, հետաքրքիր ու ծիծաղ առաջացնող բեմադրություն ներկայացնել, եւ Թատրոնի միջազգային օրը՝ մարտի 27-ին, հանդես եկանք առաջնախաղով՝ «Բակում կատաղած շուն կա» բեմադրությամբ, ինչը շատ մեծ ոգեւորությամբ ընդունվեց մեր հանդիսատեսի կողմից: Փորձեցինք մեր հանդիսատեսին մի քիչ կտրել առօրյա հոգսերից: Կարծում եմ՝ ստացվեց, որովհետեւ մարդիկ շնորհակալություն էին հայտնում՝ նշելով, որ ներկայացման ամբողջ ընթացքում իրենք մոռացել էին՝ ինչ պայմաններում են ապրում, ինչ դժվարություններ են հաղթահարել:

- Ի՞նչն է հանդիսատեսին թատրոն բերում, եւ արդյո՞ք պահանջված է այն երիտասարդության շրջանում, թե՞ ամեն դեպքում ժամանակակից տեխնոլոգիաները փոխարինում են թատրոնին:

- Առաջին հերթին, հանդիսատեսին թատրոն բերում է թատրոնի հանդեպ ունեցած սերը: Թատերական աշխարհը շատ հետաքրքիր է՝ դերասան-հանդիսատես անմիջական շփման ձեւով, որը չի կարելի համեմատել հեռուստատեսության կամ սոցիալական ցանցերի հետ: Դա մի ուրիշ հաճույք է. դահլիճում նստած՝ անմիջապես մասնակից դառնալ այն ամենին, ինչ կատարվում է բեմում: Ինչպես նշեցի, բեմադրել ենք «Անմահների դիրքը», որի ընթացքում այդ դիրքի պաշտպանությանը փորձել ենք մասնակից դարձնել նաեւ հանդիսատեսին՝ իրական պայթյուն, ծուխ, կրակ, որն ավելի ուժող զգացումներ է առաջ բերում:

Թատերասեր հանդիսատես ունենք ե՛ւ երիտասարդ, ե՛ւ ավագ սերնդի մեջ: Առավել շատ հաճախում են հիմնականում դպրոցահասակ երեխաները եւ ավագ սերնդի ներկայացուցիչները, իսկ ուսանողները շատ քիչ են այցելում թատրոն:

- Ըստ Ձեզ, թատրոնը կարողանո՞ւմ է զարգանալ ժամանակի նորարարություններին համապատասխան:

- Այդ խնդիրը դրված է մեր առջեւ, եւ մենք, իհարկե, փորձում ենք գտնել նորագույն տեխնիկական լուծումներ, դերասանական խաղում նորություններ մտցնել, մեր ամեն մի ներկայացման մեջ փորձում ենք մեկ քայլ առաջ գնալ՝ աշխարհի զարգացմանը համահունչ:

- Ձեր կարծիքով՝ այսօր ինչի՞ն պետք է ձգտի թատրոնը:

- Իմ կարծիքով՝ թատրոնը պետք է ձգտի միշտ պահանջված լինել: Յուրաքանչյուր նոր թատրոն բեմադրելիս մենք փորձում ենք հաշվի առնել նաեւ մեր հանդիսատեսի կարծիքը, իսկ մանկական ներկայացումների ժամանակ խորհրդակցում ենք կրթության քաղաքային բաժնի հետ, դպրոցի տնօրենների հետ՝ հասկանալու՝ աշակերտներն այդ պահին ինչ թեմաներ են անցնում, որպեսզի իրենց սովորածը նաեւ դիտելու հնարավորություն ունենան: Ընդհանրապես, մենք միշտ փորձում ենք հանդիսատեսի պահանջները կատարել, որպեսզի այստեղից միշտ գոհ դուրս գան:



- Ինչպիսի՞ խնդիրներ ունի թատրոնը, եւ ինչպե՞ս եք փորձում դրանց լուծումներ տալ:

- Թատրոնի խնդիրները բազմաթիվ են: Առաջնային է մնում շենքային պայմանների բացակայության հարցը: Մեր մայր թատրոնն այս պահին գտնվում է վթարային վիճակում, որի պատճառով չենք կարողանում տարրական թատերական պայմաններում ներկայացումներ բեմադրել: Մեզ հատկացված է Ստեփանակերտի Մշակույթի եւ երիտասարդության պալատի փոքր դահլիճը, որտեղ ոչ մի թատերական պայման չկա, տեխնիկապես հագեցած չէ, սակայն մենք տեղում փորձում ենք խնդիրներին լուծում տալ, եւ որոշ չափով ստացվում է: Եթե ունենայինք մայր թատրոնի բեմի բարձրությունը, լայնությունը, տեխնիկական հնարավորությունները, ավելի լավ ներկայացումներ կարելի կլիներ բեմադրել, սակայն փորձում ենք սահմանափակվել ունեցածով:

Խոսակցություններ կան շենքի վերանորոգման մասին: Հույս ունեմ, որ խոսքը կվերածվի գործի: Այս պահին նախահաշվային աշխատանքներ են տարվում. տեսնենք այս անգամ խոսքը գործ կդառնա՞, թե՞ ոչ:

Դերասանական կազմի առումով՝ ինչպես նշեցի, պատերազմից հետո երիտասարդ դերասանները լքեցին թատրոնը: Մենք փորձեցինք լրացնել այդ բացը, սակայն երիտասարդ դերասանների պահանջը միշտ զգացվում է:

- Կա՞ն մասնավոր կազմակերպություններ, որոնք աջակցում են թատրոնի աշխատանքներին:

- Կան մասնավոր կազմակերպություններ, որոնք աջակցում են մեզ հյուրախաղերի կազմակերպման հարցում՝ Հայ օգնության միությունը, ՀՅ Դաշնակցությունը, Համազգային հայ կրթական եւ մշակութային միությունը, Ռուբեն Վարդանյանը եւ այլք, առանց որոնց հնարավոր չէր լինի հյուրախաղերի կազմակերպումը:

- Պատերազմից հետո նաեւ հյուրախաղերով արտասահմանում եք եղել: Ինչպիսի՞ ընդունելության եք արժանացել:

- Շատ լավ ընդունելության արժանացանք, լավ կազմակերպված էին հյուրախաղերը: Եղել ենք Լիոնում, Բրյուսելում, Քյոլնում, Բեռլինում, Վիեննայում, Մոսկվայում, ներկայացրել ենք «Երկնքից երեք խնձոր ընկավ» բեմադրությունը:

Հանդիսատեսը շատ գոհ էր: Նույնիսկ խնդրեցին, որ լրացուցիչ եւս ներկայացնենք: Չէին պատկերացնում, որ Ստեփանակերտը նման թատրոն ունի: Շնորհակալություն եմ հայտնում Կարինե Քոչարյանին հյուրախաղերի կազմակերպման եւ բեմադրման համար:

- Հայաստանյան թատրոնների հետ ունե՞ք համագործակցություն համատեղ ներկայացումներով հանդես գալու համար:

- Վանաձորի թատրոնի հետ համատեղ ներկայացրել ենք «Ռուզան» ներկայացումը, որի դերասանական խմբի մի մասը Ստեփանակերտից էր, մի մասը՝ Վանաձորից: Շատ հետաքրքիր ներկայացում էր, դերասանական խաղ, նաեւ՝ լավ փորձի փոխանակում: Նախատեսում էինք նրանց հյուրընկալել նաեւ Ստեփանակերտում, սակայն, ստեղծված իրավիճակով պայմանավորված, ծրագիրն իրականություն չդարձավ: Այլ թատրոնների հետ եւս ունենք բարիդրացիական կապեր, սակայն նորից, իրավիճակով պայմանավորված, փոխայցելությունները դժվարանում են: 2 տարի առաջ հյուրախաղերով եղել ենք Երեւանում, Հրազդանում, Արտաշատում, Գյումրիում, Տաշիրում, Վանաձորում:

- Նշեցիք, որ առաջիկայում ունեք ներկայացումներ, բայց ի՞նչ սպասի հանդիսատեսը տարվա համար:

- Այս պահին մի բեմադրություն արդեն հանձնել ենք հանդիսատեսի դատին եւ կատարում ենք ընտրություն հաջորդի համար, որից հետո էլ մի մանկական ներկայացում ենք ունենալու:

- Վերջերս կազմակերպել եք նաեւ «Ստեփանակերտի Վահրամ Փափազյանի անվան պետական դրամատիկական թատրոն-90» գրքի շնորհանդեսը: Ի՞նչ կասեք այդ մասին:

- Գիրքը, որի հեղինակը Կարինե Ալավերդյանն է, տպագրվել է ԱՀ ԿԳՄՍ նախարարության պատվերով: Գունեղ գրքի մեջ ներկայացված է թատրոնի պատմությունն ու բեմադրությունների վերաբերյալ պատմությունները: Գիրքը տպագրվել է շատ մեծ դժվարությամբ եւ այս պայմաններում՝ շատ մեծ դժվարությամբ էլ Արցախ տեղափոխվել:

Վահագն ԽԱՉԱՏՐՅԱՆ

Վիգեն Գրիգորյանի նահատակության 30-ամյա տարելիցն է

Արդեն երրորդ տարին է, ինչ Արցախյան պատերազմի առաջամարտիկ, ՀՅԴ Արցախի ԿԿ անդամ, ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, «Մարտական խաչ» 2-րդ աստիճանի շքանշանի ասպետ Վիգեն Գրիգորյանի հարազատները, մարտական ու կուսակցական ընկերները նրա հիշատակին հարգանքի տուրք են մատուցում նրա ծննդավայրից հեռու:

Վիգեն Գրիգորյանը ծնվել եւ հասակ է առել Հադրութի շրջանի Տող գյուղում (ծնվել է 1951թ. օգոստոսի 8-ին): 1972 թվականին ավարտել է Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական համալսարանը եւ երկար տարիներ դասավանդել Տողում ու Հադրութի շրջանի այլ գյուղերում: Ինչպես փաստում են ընկերները՝ վճռական էր, խելացի, հավասարակշված, հայրենասեր, իսկական առաջնորդ ու ոգեւորող:

1988-ին ստեղծել է «Վրեժ» հայդուկային ջոկատը: Ապրելով Տող գյուղում՝ մասնակցել է ողջ շրջանի ու այլ վայրերի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին: Մասնակցել է Հադրութի (Տող, Սարինշեն, Հողեր, Ծամձոր եւ այլն), Ասկերանի (Խոջալու), Ֆիզուլիի շրջանների մարտերին: 1991թ. դեկտեմբերի 28-ին Տողի թիվ 36 ընտրատարածքից ընտրվել է ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր:

«Քիչ էինք, մեծ ուժերի դեմ էինք կռվում, ճանապարհներն էինք ականապատում, ազերիների մեքենաներն այդ ճանապարհներին պայթում էին: Նույնիսկ մի քանի անգամ մեր գործերի մասին հայտնեցին, բայց չասացին, որ Տողի տղաներն են արել, այլ ասացին՝ Գետաշենի վրիժառուներն են եկել Հադրութում գործ կատարել: Մենք էլ, օգտվելով այդ առիթից, հաջորդ ակտերի ժամանակ գրում էինք «Եղեգնաձորի վրիժառուներ», «Հոկտեմբերյանի վրիժառուներ», «Նոյեմբերյան», «Իջեւան» եւ այլն: Դա ահուսարսափ էր առաջացնում թշնամու մեջ, որովհետեւ նրանք կարծում էին, թե ողջ Հայաստանը կռվում է Հադրութի շրջանում»,- հարցազրույցներից մեկում նշել է Վ. Գրիգորյանը:

Արցախյան շարժման հենց սկզբից Վիգենը Հադրութի շրջանի ամենաակտիվ գործիչներից էր: Մարտական ընկեր Վահե Սահակյանի եւ մյուսների համար ուսուցիչ էր, ծնող: «Չէր ասում՝ գնանք մեռնենք, ասում էր՝ պիտի ապրես ու կռվես: Նրա համար մեծ ցավ էր թեկուզ մեկ գինվորի մատի վնասվածքը»,- ասում է նա:

Կյանքի վերջին ամիսներին Վիգենը Տողի գումարտակի շտաբի պետն էր, եւ Արմենչոյի հետ միասին ձեռնարկեցին ու իրագործեցին մի շարք փայլուն գործողություններ: Վիգենը համակված էր հայությունը հայրենիքում միավորելու, ազատ եւ միացյալ Հայաստան վերակերտելու գաղափարով: Վիգենը լավ գիտեր իր ժողովրդի պատմությունը: Կինը՝ Գրետա Ավետիսյանը, հիշում է ամուսնու խոսքերը. «Ասում էր՝ ինչ Ջաբրայիլ, ինչ Ֆիզուլի, սրանք մեր պատմական հողերն են, որի մասին վկայում են նույնիսկ քարերը»:

30 տարի առաջ՝ 1993թ. ապրիլի 5-ին Տողի գումարտակը հետ էր մղում թշնամուն, բայց զինամթերքը վերջանում էր: Դրանք վտանգավոր ճանապարհով բերելն իր վրա վերցրեց հրամանատարը. հետադարձ ճանապարհին մեքենան պայթեց ականի վրա:

Դստեր՝ Ալենուշ Գրիգորյանի համար ցավալի է, որ չեն կարողանում այցելել հոր շիրիմին: Ամեն տարի ապրիլի 5-ին հայրենի գյուղում միջոցառում էր կազմակերպվում, ծաղիկներ էին խոնարհում Վիգեն Գրիգորյանի գերեզմանին, իսկ վերջին պատերազմից հետո Եղբայրական գերեզմանոց են այցելում: «Այս տարի, կապված շրջափակման հետ, մայրս հարսների ու թոռների հետ այսօր Եռաբլուր է գնում, ես եւ եղբայրներս այստեղ՝ Եղբայրական գերեզմանոց: Բոլորն էլ մեր հայրենիքի համար են իրենց կյանքը նվիրել, ու միշտ ծաղիկներ էի խոնարհում բոլորի համար, փնտրում «Վիգեն» անունով նահատակված հերոսի, հետո մեր հարեւան Տումի գյուղից Վիգենի գերեզմանաքարը տեսա, ու ամեն անգամ առաջինը նրա շիրմաքարին եմ ծաղիկ խոնարհում»,- ասում է նա:

Դստեր համար Վիգեն Գրիգորյանը մարդկային ամենաբարձր արժանիքների հավաքական կերպար էր՝ հայրենասեր, նվիրյալ, ազնիվ, բարի: «3-4 տարեկան էի, եղբայրներիս հետո երգում էինք «Դաշնակ Դրո»-ն, ՀՅ հիմնը. սիրում էր երգեցնել ինձ: 1988թ. շարժման սկզբնավորումից սկսած՝ թեկուզ փոքր էի, բայց շատ են տպավորվել հորս հետ կապված հիշողությունները: 1988թ. փետրվարի 20-ի նախօրյակին, երբ կարմիր, կապույտ ու ծիրանագույն կտորներ էր տուն բերել, մտածեցի, թե մայրս ինձ համար ինչ-որ գունավոր զգեստ է կարելու, այնինչ կարվեց մեծ եռագույն: Գյուղում չէինք կարող մեքենան դրոշով ծածկել, քանի որ հարեւանությամբ ազերիներ էին բնակվում, ուստի գյուղից դուրս գալուց հետո դրոշը հանում էինք ու մինչեւ Ստեփանակերտ ծածանում: Ինձ համար դրանք անմոռանալի զգացողություններ են եւ ամբողջ կյանքում ինձ հետ կմնան»,- պատմում է Ալենուշը:

ՀՅԴ Բյուրոյի անդամ, ԱՀ ԱԺ ՀՅԴ խմբակցության պատգամավոր Դավիթ Իշխանյանի կարծիքով՝ Վիգեն Գրիգորյանը խորությամբ չուսումնասիրված կերպար է: «Ես այն երջանիկներից մեկն եմ, ով առիթ է ունեցել իր հետ երեք հարթակներում լինելու. նախ՝ որպես առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, այնուհետեւ՝ պատերազմական դաշտ եւ կուսակցական գործունեություն: ՀՅԴ Արցախի Կենտրոնական կոմիտեի անդամներ էինք. շատ ծանր էր իրավիճակը՝ ոչ միայն պատերազմով պայմանավորված, այլ նաեւ՝ քաղաքական առումով: Այդ օրերին լինել խորհրդարանական, զինվորական ու դաշնակցական, շատ դժվար էր: Վիգեն Գրիգորյանի թողած հետքն ուսանելի է: Նա այն եզակիներից մեկն էր, որ խորհրդային տարիներին ստացել է համապատասխան դաստիարակություն, բայց կարողացել է պահել իր արժեհամակարգը: Նրա որդեգրած արժեհամակարգը պետք է մեզ համար ուղեցույց դառնա, եւ մեզնից յուրաքանչյուրը պետք է կարողանա Վիգենի թողած հետքը, ավանդը իր համար դարձնել գործելաոճ»,- նշել է Դավիթ Իշխանյանը:

2023թ. ապրիլի 5-ին Արցախի Ազգային ժողովի ճեմասրահի զոհված պատգամավորների հիշատակը հավերժացնող հուշատախտակի առջեւ Վիգեն Գրիգորյանի հիշատակին հարգանքի տուրք են մատուցել ու ծաղիկներ դրել նրա զավակները, ընկերները, կուսակցական ու մարտական ընկերներ, ԱՀ ԱԺ պատգամավորներ:

Ամուսնացած էր, ունի երեք զավակ:

Տողի միջնակարգ դպրոցը կրում էր նրա անունը: Մարմինն ամփոփված է հայրենի գյուղում:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

Գնահատանք ու խոնարհում՝ Մայրության ու գեղեցկության տոնին

ՀՅԴ Արցախի կառույցի, Հայ օգնության միության Արցախի միավորի, Հայ մարմնակրթական ընդհանուր միության Արցախի մասնաճյուղի, Համազգային հայ կրթական եւ մշակութային միության Արցախի գրասենյակի, ՀՅԴ Արցախի երիտասարդական ու պատանեկան միությունների համատեղ ջանքերով ապրիլի 7-ին Ստեփանակերտում կազմակերպվել է միջոցառում՝ նվիրված Մայրության եւ գեղեցկության օրվան, Սուրբ Աստվածածնի Ավետման տոն օրվան:

Միջոցառմանը մասնակցում էին Արցախյան պատերազմներում նահատակված ՀՅԴ եւ ուղեկից կառույցների անդամների կանայք, մայրեր: Նպատակն էր՝ շրջափակման ու 44-օրյա պատերազմից հետո ստեղծված ծանր պայմաններում փոքրիկ տոն պարգեւել նահատակ հերոսների մայրերին ու կանանց, թեկուզ կարճ ժամանակով նրանց կտրել առօրյա հոգսերից ու մտածմունքներից: Միջոցառումը օրհնանքի խոսքով բացել է Տեր Անդրեաս քահանա Թավադյանը: Ներկաներին շնորհավորելով Աստվածածնի ավետման տոնի, Մայրության ու գեղեցկության տոնի առիթով՝ մաղթել է, որ հայ կանանց աչքերը երբեք արցունք չտեսնեն, ապրեն խաղաղության մեջ, ուրախանան թոռների, ծոռների ծնունդներով եւ այդ բարի ավետիսները միշտ նրանց ականջները շոյեն:

«Սուրբ Աստվածածնի ավետման տոնը մեր եկեղեցու հայրերը հաստատել են որպես հաստատուն տոն ու մշտապես նշում են ապրիլի յոթին: Այսօր, այս տոնին, մեր տոնացույցի համաձայն, համընկել է նաեւ Քրիստոսի խաչելության եւ թաղման օրը: Մարդկության պատմության մեջ տեղի ունեցած այս երկու իրողությունները՝ մեկը որպես ուրախալի տոն, մյուսը՝ որպես գույժ, մեր եկեղեցին պահում ու պահպանում է, եւ այսօր երկուսն էլ շատ բան ունեն մեզ սովորեցնելու: Աստվածածնի ավետման տոնին սուրբ Մարիամը, ի դեմս մարդկության, ստացավ Աստծո մարդացման լուրը, որ Աստված պետք է մարդանա եւ մարդկությանը փրկի: Այս ուրախությունը շատ մեծ է: Սակայն Մարիամը 33 տարի հետո տեսավ իր զավակին խաչին գամված, որովհետեւ այդ նույն մարդկությունը, հասարակությունը, ժողովուրդը չընդունեց փրկության ճանապարհը, ճշմարիտ թագավորությունը, չընդունեց հույսի թագավորությունը, այլ նախընտրեց մնալ մեղքերի, հանցանքների մեջ, իր կյանքը շարունակել այդ հանցագործ միջավայրում եւ լույսն անտեսելով՝ մնալ խավարի մեջ: Մինչ օրս այդ պայքարը կա, Քրիստոսի պայքարը շարունակվում է: Առաքյալները շարունակեցին այդ պայքարը, շարունակեցին տարածել լույսը խավարի մեջ, որի առաքյալն այսօր Առաքելական եկեղեցին է»,- նշել է Տեր Անդրեասը:

Նրա խոսքով՝ Սուրբ Աստվածածինն ուրախ էր իր ավետման տոնին, ինչպես շատերն այդ ուրախությունն ունեցել են, երբ իմացել են, որ պիտի զավակ ունենան. «Սիրելի, մայրեր, քույրեր, ձեզնից շատերն զգացել են այն մեծ ցավը, որ ունեցել է Սուրբ Աստվածածինը՝ տեսնելով իր զավակին խաչի վրա, ձեր սրտի միջով անցել է այդ սուրը, եւ այդ մեծ ցավը, վստահ եմ, որ երբեք չի ջնջվի ձեր սրտերից: Սակայն այս օրերը գալիս են մխիթարելու, որ Քրիստոս հարություն է առել, եւ նաեւ Հարության լույսը տարածվում է նրանց վրա, ովքեր նվիրումով ծառայել են եկեղեցուն, հայրենիքին, ազգին: Վստահ պիտի լինեք, որ Ձեր զավակներն էլ Քրիստոսի պես երկնային արքայության մեջ ցնծում եւ ուրախանում են ցանկացած գեղեցիկ առիթով»:

Նահատակ հերոսների հարազատներին գնահատանքի ու խոնարհումի խոսք է ուղղել ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչ Արթուր Մոսիյանը: Շնորհավորելով Մայրության ու գեղեցկության տոն օրը, Արթուր Մոսիյանը նշել է, որ միջոցառումն ունի ուրախության ու խոնարհումի բաղադրիչներ: «Դեռեւս Արցախյան առաջին պատերազմի չամոքված վերքերին ավելացավ վերջին պատերազմի դեռեւս չսպիացած վերքը: Այսպես միշտ եղել է, եւ հայ ժողովուրդը կարողացել է ինքն իրեն վերագտնել, եւ առաջին հերթին դա կատարել է իր մայրերի, քույրերի միջոցով: Համոզված եմ, որ ապրիլի յոթին նվիրված միջոցառումները կկարողանանք ավելի լավ պայմաններում նշել, եւ համոզված եմ, որ Արցախ աշխարհին ու Հայաստանին պատած արհավիրքը կկարողանանք հաղթահարել: Լավագույն խոնարհումը մեր նահատակ հերոսների առջեւ կլինի ոչ միայն հիշելը, այլ նաեւ ազատ հայրենիքի, իրենց մանկիկների արժանապատիվ, խաղաղ ապագայի կերտումը, հանուն որի նրանք նահատակվել են: Դա կլինի մեր՝ ապրողների կողմից ամենամեծ խոնարհումը նրանց առջեւ»,- նշել է ՀՅԴ Արցախի ԿԿ ներկայացուցիչը՝ ավելացնելով, որ կաշխատեն ավելի հաճախ կազմակերպել նման միջոցառումներ:

Մայրերին ու մայր հայրենիքին նվիրված ելույթներով հանդես են եկել «Մենք ենք մեր սարերը» երգիպարի պետական համույթը, երգչուհիներ Տաթեւիկ Բալայանը, Լիլիթ Ավանեսյանը, Հադրութի մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը, ՀՄԸՄ-ի Արցախի միավորի ու ՀՅԴ ԱԵՄ-ի, պատանեկան միության անդամներ: Ծրագիրը ֆինանսավորել է ՀՕՄ-ի ԱՄՆ Արեւմտյան շրջանի շրջանային վարչությունը:

Ներկաներից Կարինե Դադայանը բոլորի անունից շնորհակալություն է հայտնել նման միջոցառում կազմակերպելու համար: «Այս միջոցառումը եւս մեկ անգամ վեր հանեց մեր զգացումները, ինչ մենք վերապրում ենք ամեն օր, ամեն վայրկյան: Տա Աստված՝ այլեւս մեր երկնակամարում նման պատերազմներ չլինեն: Մենք այն ժողովուրդն ենք, ում ուղին անցել է պայքարի միջոցով: Պայքարում ենք ամեն ձեւով: Թող մեր պայքարը խաղաղ ավարտ ունենա»,- նշել է նա:

Տաթեւիկ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանցների 17,
հեռ. +374 97 38 43, E-mail: aparajtert@gmail.com
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 700: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ա. Պուլուզյան